efes INSURANCE



ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
CONSTRUCTION RISKS INSURANCE RULES

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն 01 առ 08/08/2023թ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
08.08.2023 թ.-ից

Կոդ՝ 04.04.01
Խմբագրություն՝ 1.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

TABLE OF CONTENTS

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
CHAPTER 1. GENERAL PROVISIONS 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
CHAPTER 2. DEFINITIONS 3
ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 5
CHAPTER 3. INSURANCE OBJECT 5
ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 9
ԳԼՈՒԽ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
CHAPTER 5. INSURANCE ACCIDNETS, EXCLUSIONS 9
ԳԼՈՒԽ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 26
CHAPTER 6: SUM INSURED, INSURANCE PREMIUM, INSURANCE RATE, DEDUCTIBLE AMOUNT 26
ԳԼՈՒԽ 7: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ 33
CHAPTER 7: CONTRACT CONCLUSION PROCEDURE, OPERATING TERMS AND TERMINATION PROCEDURE 33
ԳԼՈՒԽ 8: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 46
CHAPTER 8: THE RIGHTS AND THE OBLIGATIONS OF THE PARTIES 46
ԳԼՈՒԽ 9: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 60
CHAPTER 9: DETERMINATION OF THE AMOUNT AND PROCEDURE FOR PAYMENT OF INSURANCE COMPENSATION 60
ԳԼՈՒԽ 10: ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 67
CHAPTER 10: SUBROGATION 67
ԳԼՈՒԽ 11: ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 68
CHAPTER 11: DISPUTE RESOLUTION PROCEDURE 68
ԳԼՈՒԽ 12: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 69
CHAPTER 12: OTHER PROVISIONS 69
ՀԱՎԵԼՎԱԾ 1 70
APPENDIX 1 70

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնների և գործող օրենսդրության հիման վրա «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է շինարարական-մոնտաժային աշխատանքների՝ բոլոր ռիսկերից ապահովագրության պայմանագրեր իրավաբանական և գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիրներ):

1.2. Սույն Կանոնները հանդիսանում են Կանոնների համաձայն կնքված Շինմոնտաժային աշխատանքների՝ բոլոր ռիսկերից կամավոր ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի/Վկայագրի) անբաժանելի մասը:

1.3. Սույն Կանոնների համաձայն «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն՝ ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով՝

Ա) Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,

Բ) Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,

Գ) Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,

Դ) Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն:

1.4. Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրող է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն: ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 14, տրված 25.07.2023թ.:

CHAPTER 1. GENERAL PROVISIONS

1.1. Pursuant to the current legislation of these rules, "EFES" ICJSC (hereinafter referred to as the Insurer) concludes construction and installation insurance contracts with all legal entities capable of working (hereinafter referred to as Insureds).

1.2. These rules are an integral part of the voluntary insurance contract (hereinafter referred to as the Contract / Policy) of Construction and Installation Works concluded in accordance with these rules.

1.3. In accordance with these rules, "EFES" ICJSC carries out insurance with the following classes of non-life insurance:

A. Insurance against fire and natural disasters,
B. Insurance against other damages to the property,
C. General Liability Insurance,
D. Financial risk insurance.

1.4. The Insurer under insurance contracts concluded in accordance with these rules is “EFES” ICJSC. CBA registration number - 14, issued on 25.07.2023.

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2.1. Ապահովագրված գույքին հասցված վնասի հետևանքով Ապահովագրողի կողմից հատուցվող պատահարներ ասելով հասկանում ենք ապահովագրված գույքի իրական վնասը, այսինքն ֆիզիկական ոչնչացումը, կորուստը կամ վնասը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք

CHAPTER 2. DEFINITIONS

2.1. Losses subject to reimbursement by the Insurer in connection with causing damage to the insurance property shall be understood as real damage, i.e. physical destruction, loss or damage to the insurance property, as well as expenses that the Insured has incurred or will have to incur in order

Ապահովադիրը կրել է կամ պետք է կրի ապահովագրական պատահարի հետևանքները վերացնելու համար:

2.2. **Ապահովադրի ներկայացուցիչներ** ասելով հասկանում ենք կապալառու և ենթակապալառու կազմակերպությունները և դրանց աշխատակիցները, որոնք իրականացնում են շինմոնտաժային աշխատանքներ՝ համաձայն Կանոնների 3.2.1 և 3.2.2 կետերի, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2.3. Մեկ ապահովագրական պատահարի համար **Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափ** ասելով հասկանում ենք վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափը՝ ապահովագրված գույքի առանձին խմբերի, ապահովագրական ռիսկերի, Պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած մեկ կամ բոլոր ապահովագրական ռիսկերի և ապահովագրված ծախսերի մասով:

2.4. **Ոչ պայմանական չհատուցվող գումար** (այսուհետ՝ չհատուցվող գումար) ասելով հասկանում ենք Ապահովագրության օբյեկտներին հասցված վնասի մի մասը, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից: Չհատուցվող գումարը գործում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար: Եթե տեղի է ունեցել մի քանի ապահովագրական պատահար, ապա չհատուցվող գումարը մասհանվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար: 24 ժամվա ընթացքում շարունակաբար կամ ընդհատումներով տեղացող կարկուտից հասցված վնասը՝ դիտարկվում է որպես մեկ ապահովագրական պատահար: 72 ժամվա ընթացքում շարունակաբար կամ ընդհատումներով տեղի ունեցող բնական երևույթ հանդիսացող իրադարձությունների (բացառությամբ կարկուտի) հետևանքով հասցված վնասները դիտարկվում են որպես մեկ

to eliminate the consequences of the insurance accident.

2.2. **Representatives of the Insured** shall be understood the contractor and subcontractor organizations and their employees, who carry out construction and installation works in accordance with clauses 3.2.1 and 3.2.2 of the Rules, unless otherwise provided by the Contract.

2.3. **Insurer's liability limit** shall be understood the maximum amount of one insurance compensation payable for certain groups of insurance property, insured risks, one or all the insurance risks and insured expenses occurred during the term of the Contract.

2.4. **Non-conditional deductible amount** (hereinafter deductible amount) shall be understood a part of the damage caused to the insurance objects, which is not subject to compensation by the Insurer. The deductible amount is applied for each insurance accident. If several insurance accidents have occurred, the deductible amount is reduced for each insurance accident. The damage caused by continuous hail or hail for intermittently during 24 hours is considered as one insurance accident. Damage caused by natural disasters (excluding hail) occurring continuously or intermittently for 72 hours is considered to be a single accident (e.g. flood, mudslide, strong winds).

ապահովագրական պատահար (օրինակ՝ ջրհեղեղ, սելավ, ուժգին քամիներ):

2.5. **Երրորդ անձինք** ասելով հասկանում ենք ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ովքեր, համաձայն գործող օրենսդրության, իրավունք ունեն Ապահովադրին և/կամ անձին, ում պատասխանատվությունը ապահովագրված է, պահանջ ներկայացնել իրենց հասցված վնասը փոխհատուցելու համար՝ հաշվի առնելով սույն Կանոնների դրույթները (ներառյալ Լրացուցիչ պայմանները), բացառությամբ այն անձանց, ովքեր մասնակցում են Ապահովադրի (ներառյալ անձանց, որոնց պատասխանատվությունը ապահովագրված է) հիմնական և դուստր կազմակերպությունների կողմից լիազորված անձանց ապահովագրված գործունեությանը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2.5. **Third parties** shall be understood any natural person or legal entity, who, under applicable law, has the right to make a claim for damages to the Insured and/or the person whose liability is insured, subject to the provisions of the Rules (including Additional Terms), except the main entity and persons who participate in the insured activities of the Insured (including the persons whose liability is insured) and its subsidiaries or authorized persons.

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Կանոններով նախատեսվում է տրամադրել ապահովագրական ծածկույթ հետևյալ բաժիններով՝ «Նյութական վնաս»/«Գույքի ապահովագրություն» (այսուհետ՝ «Նյութական վնաս»), «Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն» (այսուհետ՝ «Քաղաքացիական պատասխանատվություն»), «Ապահովադրի և շինմոնտաժային աշխատանքների օբյեկտների շահագործման հանձնման հետաձգման հետևանքով վնասների առաջացման ռիսկի ապահովագրություն» (այսուհետ՝ «Շահագործման հանձնելու հետաձգում»):

3.2. **«Նյութական վնաս»** բաժնով ապահովագրական ծածկույթը տարածվում է շինմոնտաժային օբյեկտների, շինանյութերի, տեղադրման ենթակա սարքավորումների, շինհրապարակում տեղադրվող ժամանակավոր կառույցների, նյութերի, շինարարական

CHAPTER 3. INSURANCE OBJECT

3.1. The Rules provide insurance coverage for the following sections: "Material damage" / "Property Insurance" (hereinafter "Material damage"), "Civil Liability Insurance" (hereinafter "Civil Liability"), "Insurance against damages caused by the delay in Insured's commissioning of construction and installation facilities" (hereinafter "Delayed commissioning").

3.2. **"Material damage"** insurance coverage covers construction and installation objects, construction materials, equipment to be installed, temporary structures located in construction site, materials, construction equipment and other property (including tools, clothing) used in

տեխնիկայի և այլ գույքի վրա (այդ թվում՝ գործիքների, հագուստի), որն օգտագործվում է շինմոնտաժային աշխատանքներում և/կամ գտնվում է շինհրապարակում:

Սույն բաժնով Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի/Շահառուի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող շահերը, որոնք կապված են՝

- շինմոնտաժային աշխատանքների օբյեկտ և/կամ դրանց իրականացման միջոց հանդիսացող գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ,
- Ապահովադրի մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման հետ, որոնք պայմանավորված են վերջինիս՝ իր կողմից կառուցված շենքին (կառույցին) կամ տեղադրված սարքավորմանը հասցված վնասը հատուցելու պարտավորությամբ, որը հետևանք է եղել շինմոնտաժային, գործարկման և հետգործարկման երաշխիքային աշխատանքների ժամանակ բացթողումների, որոնք սակայն ի հայտ են եկել հետգործարկման երաշխիքային շրջանում:

Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա սույն Կանոններով ապահովագրության ենթակա են՝

3.2.1. **Շինարարական աշխատանքները** (ներառյալ՝ շինանյութերը և շինարարական կոնստրուկցիաները), աշխատավարձերի ծախսերը, մաքսային վճարները և տուրքերը:

Սույն Կանոնների շրջանակներում շինարարական աշխատանքներ ասելով հասկանում ենք առկա շենքերի և կառույցների փոփոխման, վերակառուցման և նոր շենքերի ու կառույցների

construction and installation and / or located at the construction site.

According to this section, the object of insurance is the interests of the Insured / Beneficiary, that do not contradict the RA legislation, and are related to:

- the possession, use, and management of the construction and installation works and / or the means of their implementation,
- additional costs incurred by the Insured due to the latter's obligation to compensate the damages to the building (structure) or equipment installed by them, which resulted from omissions during the construction, installation, commissioning, and post-commissioning warranty, but which were discovered during the post-commissioning warranty period.

The following are subject to insurance under the Rules, unless otherwise is stated by the Contract:

3.2.1. **Construction works** (including building materials and building structures), wage costs, custom duties, and other duties.

Construction works within the terms of the Rules shall be understood the change of existing buildings and structures, reconstruction, creation of new buildings and structures, which are not installation works.

ստեղծման աշխատանքները, որոնք չեն հանդիսանում մոնտաժային աշխատանքներ:

3.2.2. **Մոնտաժային աշխատանքները**, ներառյալ մոնտաժվող սարքավորումը, նյութերը, աշխատավարձերի ծախսերը, տեղափոխման ծախսերը, մաքսային վճարները և տուրքերը: Սույն Կանոնների շրջանակներում մոնտաժային աշխատանքներ ասելով հասկանում ենք սարքավորումների և/կամ մետաղական կոնստրուկցիաների մոնտաժման/ապամոնտաժման աշխատանքները:

3.2.2. **Installation works**, including the equipment to be installed, materials, wage costs, custom duties and other duties.
Installation works within the terms of the Rules shall be understood the installation / dismantling works of equipment and/or metal constructions.

3.2.3. **Շինհրապարակի սարքավորումները**: Շինհրապարակի սարքավորումներ ասելով հասկանում ենք ժամանակավոր շինությունները և կառույցները, ցանկապատերը, լուսավորությունը, ներքին ավտոճանապարհները, պահեստավորման տնտեսությունը և նյութական ռեսուրսների պահպանման կառույցները և այլն:
Վերոնշյալ 3.2.1 - 3.2.3 կետերով սահմանված գույքը համարվում է ապահովագրված, եթե ներառված է Շինարարական պայմանագրում (смета), կամ հատուկ սահմանված է ապահովագրության պայմանագրով:

3.2.3. **Construction site equipment.**
Construction site equipment within the terms of the Rules shall be understood the temporary structures and buildings, fences, lighting, on-site roads, storage facilities, facilities for storing material resources, etc.
The property defined in the clauses 3.2.1 - 3.2.3 is considered insured if it is included in the construction contract or is specifically indicated in the Contract.

3.2.4. Ապահովագրության պայմանագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում՝ ապահովագրության ենթակա են նաև՝

3.2.4. In case of specifically indicated in the Contract, the following are also subject to insurance:

3.2.4.1. **Շինարարական տեխնիկան**: Շինարարական տեխնիկա ասելով հասկանում ենք շինարարության մեջ օգտագործվող մեքենաները, մեխանիզմները և սարքերը, այդ թվում՝ հողափոր, ճանապարհաշինարարական, այլ շարժական կամ ստացիոնար տեխնիկա:

3.2.4.1. **Construction equipment**.
Construction equipment shall be understood the machines, mechanisms and devices used in construction, including excavation, road construction, and other mobile or stationary equipment.

3.2.4.2. **Առկա գույքը**: Առկա գույք ասելով հասկանում ենք շինհրապարակում կամ դրա անմիջական հարևանությամբ գտնվող գույքը (բացառությամբ սույն Կանոնների 3.2.1 - 3.2.3 կետերում նշված օբյեկտների), որը պատկանում է Պատվիրատուին կամ Կապալառուին

3.2.4.2. **Existing property**.
Existing property shall be understood the property located in or near to the construction (except for the objects specified in clauses 3.2.1 - 3.2.3 of the Rules) and is owned by the Customer or the

սեփականության իրավունքով կամ այլ իրավական/պայմանագրային հիմքով:

Contractor with the right of ownership or other legal basis.

3.2.4.3. Ապահովագրության տարածքի՝ ապահովագրական պատահարի հետևանքով վնասված գույքի փլատակներից (մնացորդներից) մաքրման ծախսերը:

3.2.4.3. Expenses for clearing the territory of insurance from debris (remnants) of property damaged as a result of an insurance accident.

3.2.4.4. Հետգործարկման երաշխիքային պարտավորությունները: Հետգործարկման երաշխիքային պարտավորությունների ապահովագրության լրացուցիչ պայմանները սահմանված են Լրացուցիչ դրույթներում (տես՝ սույն Կանոնների Հավելված 2):

3.2.4.4. **Post-commissioning warranty liability insurance.**
The additional terms of post-commissioning warranty liability insurance are set out in the Additional Conditions (see Appendix 1 of the Rules).

3.3. Ապահովագրության պայմանագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում, ապահովագրության ենթակա են նաև՝

3.3 In case of specifically indicated by the Contract, the following are also subject to insurance:

3.3.1. **«Քաղաքացիական պատասխանատվություն»**: Սույն բաժնով ապահովագրական ծածկույթը տարածվում է երրորդ անձանց կողմից Ապահովադրին պահանջների ներկայացման վրա՝ վերջինիս կողմից «Նյութական վնաս» բաժնով ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների իրականացման հետ անմիջական կապ ունեցող իրադարձությունների հետևանքով հասցված վնասի փոխհատուցման համար:

3.3.1. **“Civil liability”**. The insurance coverage under this section applies to the submission of claims to the Insured by third parties to compensate the damage caused by the events directly related to the implementation of the construction and installation works insured by under the section "Material damage”.

3.3.2. **«Շահագործման հանձնելու հետաձգում»**: Շինմոնտաժային աշխատանքների օբյեկտների շահագործման հանձնման հետաձգման հետևանքով վնասների առաջացման ռիսկի ապահովագրության մասով Ապահովագրության օբյեկտ են համարվում Պատվիրատուի գույքային շահերը՝ կապված շինմոնտաժային աշխատանքների օբյեկտների շահագործման հանձնման հետաձգման հետևանքով վնասների առաջացման ռիսկի հետ: «Շահագործման հանձնելու հետաձգման»

3.3.2. **"Delayed commissioning"**. As part of the risk of delays in commissioning, the Insurance object is the Customer’s property interests related to the losses incurred because of delays in commissioning.
The additional conditions on "Delayed commissioning" are set out in the Additional conditions.

ապահովագրության լրացուցիչ պայմանները սահմանված են Լրացուցիչ դրույթներում:

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

4.1 Սույն Կանոնների շրջանակներում տրամադրվող ապահովագրական ծածկույթը գործում է Ապահովագրության պայմանագրում նշված շինհրապարակում: Այն դեպքում, երբ ապահովագրված գույքի մի մասը հիմնական շինհրապարակից առանձին է տեղակայված, ապահովագրությունը այդ գույքի վրա տարածվում է միայն այն դեպքում, երբ այդ գույքի մասին ուղղակիորեն նշված է Ապահովագրության պայմանագրում:

4.2 Ապահովագրության պայմանագրում, Կողմերի միջև հատուկ համաձայնության առկայության դեպքում, ապահովագրությունը կարող է տարածվել նյութերի և սարքավորումների փոխադրման վրա՝ առանձին տեղակայված պահեստից դեպի հիմնական շինհրապարակ, ինչպես նաև բեռների փոխադրման վրա՝ մինչև շինհրապարակ:

4.3 Ապահովագրության տարածքից դուրս ապահովագրված գույքին հասցված վնասը Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ:

ԳԼՈՒԽ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ***Նյութական վնաս.***

5.1.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողը Ապահովադրին հատուցում է 3.2.1 - 3.2.3 և 3.2.4.1 - 3.2.4.2 կետերում նշված ապահովագրված գույքի չնախատատեսված և անկանխատեսելի նյութական ազդեցության, ֆիզիկական ոչնչացման կամ վնասի արդյունքում հասցված վնասը (իրական վնաս) «բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ», բացառությամբ սույն Կանոններով, դրանց Լրացուցիչ պայմաններով կամ Ապահովագրության պայմանագրով բացառված

CHAPTER 4. INSURANCE AREA

4.1. Insurance coverage provided in accordance with the Rules is valid within the construction site specified in the Contract. In case a part of the insurance property is located separately from the main construction site, then insurance coverage will apply to this property only if it is directly stipulated in the Contract.

4.2. With the special agreement of the Parties, the insurance may be extended to the transportation of materials and equipment from a separate warehouse to the main construction site, as well as for the transportation of cargo to the construction site.

4.3. Damages to the insurance property caused outside from the territory of insurance shall not be compensated by the Insurer.

CHAPTER 5. INSURANCE ACCIDNETS, EXCLUSIONS

5.1. ***"Material damage"***

5.1.1. In accordance with the Rules, the Insurer reimburses the Insured with "liability for all risks" for losses (real damages) arising from unforeseen material impact, physical destruction or damage to the insurance objects referred in clauses 3.2.1 - 3.2.3 and 3.2.4.1 - 3.2.4.2, as a result of unforeseen and sudden material impact, except in cases, stipulated in the Rules, Additional Conditions or the Contract. Exceptions and limitations of the insurance coverage specified in the Rules (including Appendix 2 and 2) apply

դեպքերի: Սույն Կանոններում (ներառյալ՝ Հավելված 1 և 2) նշված ապահովագրության ծածկույթից բացառությունները և սահմանափակումները կիրառվում են, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրում: Չնախատեսված և անկանխատեսելի են համարվում, այն նյութական ազդեցությունները, որոնք Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները չեն կարողացել ժամանակին կանխատեսել կամ չէին կարող կանխատեսած լինել՝ հիմնվելով շինարարության ոլորտում սովորական պրակտիկա հանդիսացող մասնագիտական գիտելիքների վրա:	unless otherwise is indicated in the Contract. Material impacts are considered unforeseen and unpredictable, if the Insured or its representatives could not have predicted them on time or could not have predicted based on the common practice in the construction field.
5.1.2. Առկա գույքի (3.2.4.2 կետ) համար Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել տվյալ օբյեկտի «բոլոր ռիսկերից պատասխանատվության» ապահովագրություն՝ չնախատեսված և անկանխատեսելի նյութական ազդեցության արդյունքում առաջացած ֆիզիկական ոչնչացումից կամ վնասից (եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ), պայմանով, որ. ➢ այդպիսի գույքի ֆիզիկական ոչնչացումը կամ վնասը եղել է Ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինարարական և/կամ մոնտաժային աշխատանքների իրականացման հետևանքով, ➢ ապահովագրված գույքը մինչև շինմոնտաժային աշխատանքների սկիզբը չի ունեցել վնասվածքներ և ձեռնարկվել են դրա պահպանման համար համապատասխան միջոցառումներ:	5.1.2. For the existing property (clause 3.2.4.2) the Contract may provide "liability for all risks" insurance, for the physical destruction or damage caused by unforeseen and unpredictable material impact (unless otherwise is indicated in the Contract), provided that: ➢ physical destruction or damage of such property occurred during the insured construction and/or installation works of the Contract, ➢ the insurance property was not damaged prior to the commencement of construction and installation works, and safety measures were taken to ensure its safety.
Հիմքերի և կրող կոնստրուկցիաների վիբրացիայի, հեռացման կամ թուլացման	In relation to the loss or damage to existing property due to vibration, removal or weakening

հետևանքով առկա գույքի ոչնչացման կամ վնասի մասով հատուցման ենթակա է միայն ոչ մակերեսային վնասը, որն ազդում է ապահովագրված գույքի կայունության վրա և սպառնում է այն օգտագործողներին:

of foundations and supporting structures, only non-surface damage is subject to compensation that affects the stability of the insurance property and threatens its users.

Սույն կետով հատուցման ենթակա չէ՝

- ոչնչացումը կամ վնասը, որոնք, ելնելով շինմոնտաժային աշխատանքների բովանդակությունից կամ դրանց իրականացման միջոցից, համարվում են սպասելի,
- վնասների կանխարգելման կամ նվազեցման համար ծախսերը, որոնք առաջացել են Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում:

The following are not compensated under this clause:

- destruction or damage that is foreseeable based on the content of construction and installation works or the way they are performed,
- expenses for the prevention or minimization of losses, the need for which arose during validity of the Contract.

5.1.3. Ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրված լինել շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ոչնչացումը կամ վնասը, որը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված Ապահովադրի/Կապալառուի հետգործարկային երաշխիքային պարտավորությունների կատարման ժամանակահատվածում: Նշված ապահովագրական ծածկույթի պայմանները շարադրված են համապատասխան դրույթներում (տես՝ սույն Կանոնների Հավելված 2):

5.1.3. The Contract may provide compensation for damages as a result of physical destruction or damage to the insured construction and installation works that occurred during the post-commissioning warranty period of the Insured/contractors specified in the Contract. The terms of this coverage are set out in relevant clauses (see Appendix 1 of the Rules).

5.1.4. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրողը չի հատուցում վնասը, որը կապված է՝

5.1.4.1. Նախագծման ժամանակ թույլ տված սխալների կամ շինարարական և/կամ մոնտաժային աշխատանքներում օգտագործվող նյութերի/արտադրանքի թերությունների հետ, որոնք առաջացել են դրանց արտադրության (պատրաստման) ժամանակ,

5.1.4. If not specified otherwise in the Contract, the Insurer does not compensate for losses related to:

5.1.4.1. Errors made in the design of a building object or defects in materials or castings used in construction or installation works, which occurred during their production (manufacturing),

5.1.4.2. Constructive defects,

5.1.4.2.Կոնստրուկտիվ թերությունների հետ,

5.1.4.3. Հետազոտական աշխատանքների իրականացման հետ,

5.1.4.4. Նյութերի մաշվածության, կորոզիայի, թթվելու, փտելու, ինքնահրկիզման կամ դրանց բնական որակների, ինչպես նաև եղանակային պայմանների հետ: Ընդ որում հատուցման ենթակա է ապահովագրված գույքին հասցված այն վնասը, որը հասցվել է վերոնշյալ երևույթներից:

5.1.4.5. Շինարարական տեխնիկայի խափանման և/կամ շինհրապարակի սարքավորումների անսարքության հետ, որը պայմանավորված չէ արտաքին գործոններով: Ընդ որում հատուցման ենթակա է Պայմանագրային աշխատանքներին կամ այլ ապահովագրված գույքին հասված վնասը, որը հասցվել է շինարարական տեխնիկայի և սարքավորումների նման խափանումների և անսարքությունների հետևանքով:

5.1.4.6. Վառելիքանյութերի, քիմիական նյութերի, հովացման հեղուկների և այլ սպառվող նյութերի, ինչպես նաև ապահովագրված օբյեկտում պատրաստված արտադրանքի կորստի կամ վնասի հետ:

5.1.4.7.Ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու թույլտվություն ունեցող տրանսպորտային միջոցների կորստի կամ վնասի հետ, եթե դա տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից դուրս:

5.1.4.8. Ջրային տրանսպորտի կամ թռչող սարքերի կորստի կամ վնասի հետ:

5.1.4.9. Փաստաթղթերի, գծագրերի, հաշվապահական գրքերի, հաշիվների, փողի/կանխիկի, կնիքների, գրավոր ձևակերպված պարտատոմսերի, արժեթղթերի, անդորրագրերի, կանխիկ փողի,

5.1.4.3. The implementation of research works,

5.1.4.4. With wear, corrosion, acidification, rot, self-ignition, or loss of natural qualities of materials, as well as the weather conditions. Meanwhile, the damage caused to the insurance property caused by the above-mentioned events is subject to compensation.

5.1.4.5. Construction equipment failure and/or construction site gear failure not due to external factors. Meanwhile, the damage caused to the contractual works or other insurance property, which resulted from such equipment failure or malfunction of construction equipment, is subject to compensation.

5.1.4.6. Loss or damage of fuels, chemicals, cooling fluids, other consumables, as well as products made in the insured facility.

5.1.4.7. Loss or damage to vehicles approved for use on public roads if it occurred outside the insurance area specified in the Contract.

5.1.4.8. The loss or damage of water transport or aircraft.

5.1.4.9. Loss or damage of documents, plans, accounting books, accounts, money/cash, stamps, written bonds, stocks, receipts, software, or data.

տեղեկատվական համակարգչային ծրագրերի կամ տվյալների կորստի կամ վնասի հետ:

5.1.4.10. Գույքագրման ժամանակ հայտնաբերված գույքի կորստի, անհետացման, պակասորդի կամ վնասի հետ, եթե նման վնասի պատճառը չի կարող հավաստիացվել:

5.1.4.11. Ցանկացած տիպի անուղղակի վնասների հետ, այդ թվում տույժերը, տուգանքները, ուշացման հետևանքով վնասները, պայմանագրերի խախտումները կամ չեղարկումները և կորցրած շահույթը:

5.1.4.12. Ապահովադրի կողմից շինմոնտաժային տեխնիկայի՝ այլ նպատակներով օգտագործման կամ Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) տարբերվող մեկ այլ անձի կողմից շինհրապարակում դրանց շահագործման հետ:

5.2. Քաղաքացիական պատասխանատվություն

5.2.1. Ապահովագրական պատահար է հանդիսանում ապահովագրության տարածքում և/կամ դրան հարակից տարածքներում, Ապահովագրության պայմանագրում որպես շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամկետ նշված գործողության ժամկետում տեղի ունեցած հանկարծակի և անկանխատեսելի իրադարձությունը, որը նախատեսված է Կանոններով և Ապահովագրության պայմանագրով, ուղղակիորեն կապված է Ապահովագրության պայմանագրում նշված գործունեության հետ և համաձայն քաղաքացիական օրենսգրքի նորմերի կարող է երրորդ անձանց համար հիմք հանդիսանալ՝ Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձանց պահանջ ներկայացնել իրենց վնաս պատճառելու համար փոխհատուցում պահանջելու կամ Ապահովադրի և/կամ

5.1.4.10. Loss, disappearance, shortage, or theft of property identified during inventorization if the cause of such damage cannot be ascertained.

5.1.4.11. Any type of indirect loss including penalties, fines, losses due to delays, breaches of contracts or cancellations and lost profits.

5.1.4.12. The use of construction and installation equipment by the Insured for other purposes or their use on the construction site by any person different from the Insured (Insured person, Beneficiary).

5.2. *Civil liability*

5.2.1. An insurance accident is a sudden, unforeseen event, prescribed by the Rules and the Contract, occurring during the period of validity specified in the Contract as a period for carrying out construction and installation works in the insurance area and/or adjacent areas, is directly related to the activities specified in the Contract and can serve as a basis for third parties to file a claim against the Insured and/or Insured persons to compensate for the received damages and the unforeseen expenses of the Insured and/or Insured persons according to norms of RA Civil Code.

Ապահովագրված անձանց չնախատեսված ծախսեր կրելու համար:	
5.2.2. Սույն Կանոնների համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը ապահովագրական ծածկույթ է տրամադրում Ապահովադրին (և Ապահովագրված անձին) երրորդ անձանց կողմից պահանջներ ներկայացնելու դեպքում՝ ապահովագրական պատահարի արդյունքում վերջիններիս վնաս պատճառելու հետևանքով և դրսևորվում է հետևյալ կերպ՝ ➢ ֆիզիկական անձանց մահ, վնասվածք, աշխատունակության կորուստ, ➢ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի ոչնչացում, կորուստ կամ վնաս:	5.2.2. According to the Rules the Contract provides coverage to the Insured (and the Insured person) for the claims by third parties to compensate the damages from insurance accident that manifests in the following ways: ➢ Death, injury, loss of employment of natural persons, ➢ Destruction, loss, or damage to the property of natural and legal persons.
5.2.3. Կողմերի հատուկ համաձայնության դեպքում Ապահովագրողը ծածկույթ է տրամադրում նաև շրջակա միջավայրի պաշտպանության և բնական ռեսուրսների օգտագործման վերահսկման իրավասություն ունեցող պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների և կառույցների կողմից ներկայացված պահանջների համար՝ շրջակա միջավայրին ուղղակի գույքային վնաս հասցնելու դեպքում: Շրջակա բնական միջավայրին հասցված վնաս (աղտոտում) ասելով հասկանում ենք շրջակա բնական միջավայրի վիճակի նորմերի հանկարծակի և ոչ կանխամտածված խախտումը, որոնք հաստատվել են այն տարածքի իշխանության մարմինների կողմից, որտեղ տեղի է ունեցել վնասը:	5.2.3. With the special agreement of both parties, the Insurer provides coverage for the claims of the governmental and/or local governance bodies for the protection of the environment and natural resources regarding the material damage to the natural resource. Damage to the environment (contamination) shall be understood the sudden and unintentional violation of the environmental standards established by the authorities of the area where the damage occurred.
5.2.4. Ապահովագրության պայմանագրով հատուկ համաձայնության առկայության դեպքում՝ Ապահովագրողը Ապահովադրին հատուցում է՝ 5.2.4.1. Ապահովադրից (Ապահովագրված անձից) գանձված դատական ծախսերը՝ պետական	5.2.4 With the special agreement in the Contract, the Insurer covers the following expenses of the Insured:

տուրքի գումարը, դատական փորձաքննությունների ծախսերը, տուժածի ներկայացուցչի կամ փաստաբանի ծառայությունների վճարման ծախսերը և այլն,

5.2.4.2. Ապահովագրողի հետ համաձայնեցված խելամիտ և անհրաժեշտ ծախսերը իրավաբանական օգնության և այլնի համար, որոնք Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է տուժած երրորդ անձանց կողմից ներկայացված պահանջների (հայցերի) հետաքննության, կարգավորման ընթացքում կամ դրանց մասով դատական գործերի ընթացքում: Ապահովադրի (Ապահովագրված անձի) ծախսերը, որոնք կապված են իրեն ներկայացված պահանջները ուսումնասիրելու հետ (սեփական անձնակազմի աշխատանք, գրասենյակային ծախսեր և այլն), վերոնշյալ ծախսերի շարքին չեն դասվում և հատուցման ենթակա չեն: Եթե դա հատուկ համաձայնեցված է Ապահովագրության պայմանագրով, Ապահովագրողը, քանի դեռ դա բխում է իր շահերից, իրավունք ունի մասնակցել Ապահովադրին (Ապահովագրված անձին) ներկայացված, ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով հայցերի (պահանջների) լուծմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակել իրավաբանական և տեխնիկական խորհրդականների:

5.2.4.1. State fees, expenses for judicial examinations, costs of the victim's representative or lawyer's services, etc. levied from the Insured (Insured Person) government taxes,

5.2.4.2. Reasonable and necessary expenses agreed with the Insurer for legal aid, etc., that the Insured (Insured Person) has incurred during the investigation, regulation of the claims (lawsuits) by third parties or as a part of thereof. Expenses incurred by the Insured (Insured Person) associated with examining the claims presented to them (personnel’s work, office expenses, etc.) are not included in the abovementioned expenses and are not subject to reimbursement. Unless specifically agreed in the Contract, the Insurer, as long as it is in its interests, has the right to participate in the settlement of lawsuits (claims) submitted to the Insured (Insured Person), both in court and out of court proceedings, as well as to appoint legal and technical advisers if necessary.

5.2.5. Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ Ապահովագրողը ապահովագրական ծածկույթ է տրամադրում նաև այն չնախատեսված ծախսերի մասով, որոնք կապված են պարտադրված կանխարգելիչ միջոցների հետ՝ ուղղված ապահովագրական պատահարի տեղի ունենալը կանխելուն և/կամ հակառակ ձեռնարկված կանխարգելիչ միջոցներին ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում հնարարավոր վնասը նվազեցնելուն:

5.2.5. With the additional agreement of the parties, the Insurer provides coverage for the unexpected expenses, which are connected to compulsory preventive measures directed to preventing the occurrence of an insurance accident and/or reduction of the damage from an insurance accident.

5.2.6. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրությունը չի տարածվում հետևյալ վնասների հատուցման վրա.

5.2.6.1. Գործող օրենսդրությամբ սահմանված հատուցման ծավալները և գումարը գերազանցող մաս:

5.2.6.2. Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձի կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների միջոցով հասցված վնաս, բացառությամբ շինարարության մեջ կիրառվող հատուկ տեխնիկայի:

5.2.6.3. Պայմանագրային աշխատանքներին կամ գույքին հասցված վնաս, որը ապահովագրված է կամ կարող էր ապահովագրված լինել Ապահովագրողի «Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության ընդհանուր կանոններով» կամ «Հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության պայմաններով», ինչպես նաև երաշխիքային շրջանում գույքին հասցված վնաս, որը պատկանում է երաշխիքային պարտավորությունների օբյեկտ հանդիսացող գույքի սեփականատերերին կամ գտնվում է նրանց վերահսկման տակ:

5.2.6.4. Ապահովագրության տարածից և դրան հարակից տարածքից դուրս հասցված վնաս:

5.2.6.5. Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձանց աշխատակիցների կյանքին կամ առողջությանը հասցված վնաս,

5.2.6.6. Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձանց մոտ վարձակալության, լիզինգի, պահպանության, լիազորված տիրապետման, վարձման կամ գրավի տակ գտնվող գույքին հասցված վնաս:

5.2.6.7. Ասբեստ, դիէթիլստիրոլ, ֆորմալդեգիդներ և առողջության համար վտանգավոր այլ նյութեր և բաղադրիչներ պարունակող նյութերի օգտագործումից առաջացած վնաս,

5.2.6 Unless otherwise is stated in the Contract, the insurance does not cover the following:

5.2.6.1. Compensation volume and amount exceeding current legislation.

5.2.6.2. Damage by the transportation vehicles used by the Insured and/or Insured Person, except for specialized vehicles used in construction.

5.2.6.3. Damage to contractual works or property that is insured or could have been insured by the Insurer under the "General Rules for Insurance of Construction and Installation Works" or "Insurance Terms of Post-Commissioning Warranty Liabilities", as well as damage to the property owned or under the control of the owners of post-commissioning liability objects.

5.2.6.4. Loss occurred outside the insurance area or its adjacent areas.

5.2.6.5. Damage to the life or health of the employees of the Policyholder and/or Insured Persons.

5.2.6.6. Damage to property under rent, leasing, protection, authorized possession, rent or collateral agreement of the Insured and/or Insured persons.

5.2.6.7. Damage from the use of asbestos, diesterol, formaldehyde or other hazardous substances or compounds for health in other, except for the materials that are acceptable and necessary for the construction works.

բացառությամբ այն նյութերի, որոնք թույլատրելի և անհրաժեշտ են շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ:	5.2.6.8. Damage from vibration, or the removal or weakening of load-bearing elements of the foundations of buildings and structures.
5.2.6.8. Վիբրացիայով, ինչպես նաև շենքերի և կառույցների հիմքի և կոնստրուկցիայի կրող տարրերի հեռացման կամ թուլացման հետևանքով հասցված վնաս:	5.2.6.9. Damage caused by improper fulfillment / non-fulfillment of contractual obligations.
5.2.6.9. Պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման/չկատարման հետևանքով հասցված վնաս:	5.2.6.10. Any type of indirect damage, including penalties, fines, damages from delays, violations of contracts or cancellations, and lost profits.
5.2.6.10. Ցանկացած տիպի անուղղակի վնաս, ներառյալ տույժեր, տուգանքներ, ուշացումների համար վնասներ, պայմանագրերի խախտումներ կամ չեղարկում և բաց թողնված շահույթ:	
5.2.7. Ապահովագրողը չի հատուցում փոխարինման, վերանորոգման կամ վերացման ծախսերը, որոնք կապված են շինարարության և/կամ մոնտաժման մեջ օգտագործվող դեֆեկտային նյութերի, այլ դեֆեկտային առարկաների, դրանց մասերի, նյութերի, կոնստրուկցիաների, սարքավորումների ձուլման կամ պատրաստման թերությունների հետ:	5.2.7. The Insurer shall not pay for the replacement, repairment or elimination costs associated with the use of defective materials, other defective items, parts, materials, structures, equipment casting or fabrication defects in construction and/or installation works.
5.2.8. Առկա գույքի կամ շինարարության և մոնտաժման հետ կապված՝ շինհրապարակում գտնվող այլ գույքի (այն պայմանով, որ դա ապահովագրված է Կանոնների 5.1.2 կետի համաձայն) ոչնչացման կամ վնասման հետ կապված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ այդ ոչնչացումը կամ վնասումը անմիջական կապված է ապահովագրված Պայմանագրային աշխատանքների հետ:	5.2.8. The damage or destruction of existing property or other property in the construction and installation site (on the condition, that it is insured in accordance with the clause 5.1.2) is compensated only if that destruction or damage is directly related to insured contractual works.
5.2.9. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել նաև Ապահովագրողի պատասխանատվության ծավալից այլ բացառություններ:	5.2.9. The Contract may include other exceptions from the scope of the Insurer's liability.

5.2.10. Կողմերի հատուկ համաձայնությամբ, Ապահովագրության պայմանագրում կարող է ներառված լինել ապահովագրված գույքին, չերևացող վնասվածքների արդյունքում, հասցված վնասը, որը չի նկատվել գույքի ուսումնասիրության ժամանակ, դրա դեպի շինարարական և մոնտաժման հրապարակ կամ Ապահովագրության տարածքում գտնվող այլ վայր առաքումից հետո:

5.2.10. With special agreement of the parties, the Contract may include damages to insurance property from non-visible damages that has not been detected during the examination of the property, its delivery to the construction and installation site or another location in the insurance area.

5.3. ***Շինմոնտաժային աշխատանքների օբյեկտների շահագործման հանձնման հետաձգում***

5.3. Delay in post-commissioning of construction and installation works

5.3.1. Ապահովագրական պատահար է համարվում շինմոնտաժային աշխատանքների օբյեկտների շահագործման հանձնման հետաձգման հետևանքով վնասների առաջացումը՝ ապահովագրված օբյեկտների վնասման, կորստի կամ ոչնչացման պատճառով, որոնք առաջացել են տեղի ունենալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ օժտված իրադարձությունների հետևանքով, և որոնք բացառված չեն Ապահովագրության կանոններով և Պայմանագրով, և «Շինմոնտաժային ռիսկերի ապահովագրության կանոնների» (Բաժին 1) համաձայն հանդիսանում են ապահովագրական պատահար:

5.3.1. An insurance accident is the occurrence of damages due to delays in the commissioning of construction and installation works due to damage, loss or destruction of the insurance objects that are due to accidental events that have a certain probability and possibility of occurrence, which are not excluded by the Contract and the Rules and constitute an insurance accident according to the Construction Risks Insurance Rules (Section 1).

5.3.2. Սույն բաժնի շրջանակներում ապահովագրված ռիսկը կարգավորվում է Կանոնների Հավելված 1-ով:

5.3.2. The insured risk under this section is regulated by Appendix 2 of the Rules.

5.4. ***Ընդհանուր բացառություններ***

5.4. ***General exclusions***

5.4.1. Ապահովագրական պատահար չեն հանդիսանում և հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի տեղի են ունցել հետևյալ իրադարձությունների հետևանքով՝

5.4.1. Damages directly or indirectly linked to the following events are not considered insurance accidents and are not subject to compensation:

5.4.1.1. Ցանկացած տիպի ռազմական գործողություններ, քաղաքացիական հուզումներ,

5.4.1.1. Any kind of military actions and their consequences, civil unrest, rebellion, confiscation, requisition, work interruption, arrest, destruction

ապստամբություններ, բռնագանձում, կալանք, աշխատանքի ընդհատումներ, ձերբակալում, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ գույքի ոչնչացում կամ վնասում, բռնի ազգայնացում, արտակարգ իրավիճակի հայտարարում, ընդվզում, պետական հեղաշրջում, դավադրություն, ապստամբություն, հեղաշրջում կամ դրանց հետևանքներ:

or damage to property by the order of civil or military authorities, forced nationalization, declaration of state of emergency, revolt, state takeover, conspiracy, uprising, revolution and their consequences.

5.4.1.2. Ապահովադրի (Շահառուի), նրա աշխատակիցների կամ ներկայացուցիչների դիտավորյալ գործողություններ, կոպիտ անզգուշություն և կոպիտ սխալներ:

5.4.1.2. Intentional actions, gross negligence and mistakes of the Insured (Beneficiary), its employees or Representatives.

5.4.2. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահար չի հանդիսանում և հատուցման ենթակա չէ վնասը, որը ուղղակի կամ անուղղակի առաջացել է հետևյալ իրադարձությունների արդյունքում.

5.4.2. Damages directly or indirectly linked to the following events are not considered insurance accidents and are not subject to compensation, unless otherwise is stated in the Contract:

5.4.2.1. Գործադուլներ, լոկաուտներ, զանգվածային անկարգություններ (համաձայն ՀՀ օրենսդրության):

5.4.2.1. Strikes, lockouts, mass riots (according to the RA Legislation).

5.4.2.2. Ահաբեկչության, պատանդներ առնելու կամ դիվերսիայի (համաձան ՀՀ օրենսդրության), ահաբեկչական ակտիվ/կամ ահաբեկչության վերահսկման, կանխարգելման, ճնշման և դրանց վերաբերող այլ գործողություններ, բռնության ակտի կամ մարդկանց կյանքերի, նյութական և ոչ նյութական սեփականության համար վտանգավոր գործողություններ, ցանկացած իշխանության վրա ճնշում գործադրելու կամ բնակչությանը ահաբեկելու նպատակով կամ ցանկությամբ կատարված գործողություններ: Ահաբեկչություն և/կամ դիվերսիա ռիսկերը կարող են ապահովագրվել Կողմերի համաձայնությամբ: Ընդ որում, տվյալ ռիսկերի ապահովագրությունը պետք է ուղղակիորեն նշված լինի Ապահովագրության պայմանագրում:

5.4.2.2. Terrorism, hostage-taking, or sabotage (according to the RA Constitution), actions related to active, managing, preventative suppressing, or any other terroristic acts, related to a terrorist act and/or terrorism, acts of violence or dangerous to human life, tangible, and intangible property, actions with the purpose or desire to coerce any government or intimidate the population. Risks of terrorism and/or sabotage can be insured by the agreement of both Parties. Meanwhile, insurance against these risks should be specifically provided by the Contract.

5.4.2.3. Damage or loss of the insurance property during full or partial

5.4.2.3. Աշխատանքների լրիվ կամ մասնակի դադարեցման շրջանում ապահովագրված գույքի վնասում կամ ոչնչացում.

- Աշխատանքների լրիվ դադարեցում ասելով հասկանում ենք՝ շինմոնտաժային աշխատանքների դադարեցումը անորոշ ժամկետով:
- Աշխատանքների մասնակի դադարեցում ասելով հասկանում ենք՝ շինմոնտաժային աշխատանքների ժամանակավոր դադարեցումը (մինչև 3 ամիս): Աշխատանքների մասնակի դադարեցման շրջանում չեն ներառվում ոչ աշխատանքային և տոնական օրերը:

5.4.2.4. Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող այլ կազմակերպության կողմից շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար պարտադիր շինարարական նորմերի և կանոնների, այլ պետական կամ գերատեսչական նորմատիվային փաստաթղթերի պահանջների չպահպանելը, ինչպես նաև ապահովագրված օբյեկտներում աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանելը:

5.4.2.5. Շինարարության օբյեկտի նախագծման ժամանակ թույլ տված սխալներ:

5.4.2.6. «Մոնտաժային աշխատանքների» մասով նյութերի կամ ձուլման թերություններ (դեֆեկտները), անորակ արտադրություն, բացառությամբ մոնտաժման ժամանակ թույլ տված սխալների:

5.4.2.7. «Շինարարական աշխատանքների» մասով հատուցման ենթակա չեն դեֆեկտային նյութերի կամ դրանց մասերի վերանորոգման և/կամ իրականացված շինարարական աշխատանքների թերությունների վերացման ծախսերը: Այս բացառությունը չի տարածվում

termination of work:

- Under the "period of full termination of work" means the termination of construction and installation works for an indefinite time.
- Under the "period of partial termination of work" means temporary (up to 3 months) suspension of construction and installation works. The "period of partial termination of work" does not include weekends and holidays.

5.4.2.4. Non-fulfillment of building norms and rules for implementation of construction and installation works, other federal and departmental regulatory documents, as well as safety rules during the works on insurance objects by the Insured, their representatives or other organization.

5.4.2.5. Mistakes made in the design of the construction object.

5.4.2.6. Regarding "installation works" - flaws (defects) of the materials or casting, poor-quality manufacturing, except for errors made during installation works.

5.4.2.7. Regarding "construction works", the cost of replacement, repairment of defective materials or their parts and/or to eliminate defects in the completed construction works are not subject to compensation. This exclusion does not apply to the cost of replacing or repairing properly constructed structures that are destroyed or damaged because

ճիշտ կառուցված կոնստրուկցիաների փոխարինման կամ վերանորոգման ծախսերին, որոնք ոչնչացվել կամ վնասվել են դեֆեկտային նյութերի կիրառման կամ իրականացված շինարարական աշխատանքների թերությունների պատճառով:

5.4.2.8. Համաձայնեցված նախագծից շեղումները, փոփոխությունները և կամ պրոյեկտի չկատարումը, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել շինարարության/մոնտաժման օբյեկտի կոնստրուկտիվ տարրերի ոչնչացմանը կամ վնասմանը կամ հետագա վերանախագծման անհրաժեշտությանը, այդ թվում առանձին կոնստրուկցիաների և/կամ ընդհանրապես շինարարության/մոնտաժման օբյեկտի ամրացման նախագծերի մշակմանը:

5.4.2.9. Ապահովագրված գույքի վնասումը, որը ուղղակիորեն շահագործման գործոնների կամ բնական հատկությունների ազդեցությամբ հասցված վնաս է (ներառյալ՝ մաշվածությունը, կորոզիան, թթվայնացումը, ժանգոտումը, փտումը, ինքնահրկիզումը, բորբոսը, սունկը), ինչպես նաև չօգտագործման արդյունքում առանձին առարկաների արժեքի անկումը:

5.4.2.10. Եղանակային պայմանների սովորական ազդեցությունը, որոնք պետք է հաշվի առնվեին՝ ելնելով սեզոնային և տեղական պայմաններից:

5.4.2.11. Արտաքին գործոնների ազդեցությամբ չառաջացած շինարարական տեխնիկայի և շինհրապարակի սարքավորման ներքին խափանումը կամ անսարքությունը: Դրանց հետևանքով ապահովագրված այլ գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման:

5.4.2.12. Տեխնիկական, կոնստրուկտորական, հաշվապահական և այլ փաստաթղթերի, փողի, արժեթղթերի, անդորրագրերի, փաթեթավորման նյութերի,

of the use of defective materials, or flaws in the construction works performed.

5.4.2.8. Deviations from the agreed project, modifications and/or non-implementation of the project, which led or may lead to the destruction or damage of the structural elements of the object of construction/installation, or to the need for subsequent redesign, including development projects of reinforcement of individual structures and/or object of construction/installation.

5.4.2.9. Damage directly caused by constant exposure to operational factors or natural properties of the insurance property (including depreciation, corrosion, oxidation, rust, rotting, spontaneous self-ignition, mold, fungus), as well as value reduction individual items because of non-utilization.

5.4.2.10. Normal exposure to weather conditions that had to been considered due to seasonal or local conditions.

5.4.2.11. Internal breakdowns and malfunctions of construction machinery and equipment of construction site not caused by external factors. The damage caused consecutively to other insurance property are subject to compensation.

5.4.2.12. Destruction, loss, damage to technical, constructive, accounting and other documents, money, securities, checks, packaging materials, information, software programs or data.

ինֆորմացիայի, համակարգչային ծրագրերի կամ տվյալների ոչնչացումը, կորուստը, վնասումը:

5.4.2.13. Գույքի կորուստը, ոչնչացումը, անհետացումը, պակասորդը կամ առևանգումը (բացառությամբ այն իրադարձությունների, որոնք որակվում են որպես կոտրանքով գողություն, կողոպուտ կամ ավազակություն), ինչպես նաև գույքի կորուստը ցանկացած տիպի խարդախության կամ խաբեության արդյունքում, որն ի հայտ է եկել՝ այդ թվում աուդիտորական ստուգման կամ գույքագրման արդյունքում: Գույքագրում ասելով հասկանում ենք ձեռնարկության հաշվապահական հաշվեկշռում գրանցված գույքի առկայության ստուգումը:

Իրադարձությունը համարվում է կոտրանքով գողություն, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելու մասին և համաձայն ՀՀ օրենսդրության և իրավապահ կամ դատական մարմինների կայացված վերջնական որոշմամբ՝ այն չի վերաորակվել սույն կետով չնախատեսված այլ հանցագործություն: Կողոպուտը կամ ավազակությունը համարվում են տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից որոշում է կայացվել հարուցել քրեական գործ՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Տեղի ունեցած իրադարձության փաստով քրեական գործ հարուցելու պահանջը պարտադիր չի համարվում, եթե տեղի ունեցած իրադարձությունը որակվել է քննչական մարմինների կողմից քրեական գործ՝ համաձայն սույն կետում նշված ՀՀ օրենսդրության հոդվածների, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է համաձայն ՀՀ օրենսդրության:

5.4.2.14. Միջուկային էներգիայի, ռադիացիոն վարակի, քիմիական,

5.4.2.13. Loss, destruction, disappearance, shortage, or theft of property (except for events, qualified as breaking and entering, burglary, robbery or larceny), as well as loss of property as a result of any kind of fraud and deception, including those identified from audit inspection or inventorization. Inventorization refers to checking the presence of properties listed on the balance sheet.

Event is considered a burglary if the decision on the initiation of a criminal case was submitted by the investigating authorities based on RA legislation and by final decision of legal or judicial bodies, it was not re-qualified another crime not prescribed by this clause. Event is considered a robbery or larceny if the decision on the initiation of a criminal case was submitted by the investigating authorities based on RA legislation. The requirement to initiate a criminal case on the fact of the event is not mandatory, if the event is qualified as by the investigating authorities, however, the initiation of a criminal case was rejected according to RA legislation.

5.4.2.14. Consequences of nuclear energy, radiation contamination, application of chemical, biological, biochemical weapon of any form, including:

կենսաբանական, կենսաքիմիական զենքի ցանկացած ձևով կիրառման ազդեցությունը, այդ թվում նաև՝

- ցանկացած միջուկային վառելիքից կամ ցանկացած միջուկային թափոններից կամ միջուկային վառելիքի բռնկումից իոնիզացնող ռադիացիայի կամ ռադիացիայով վարակումը,
- միջուկային սարքավորման, ռեակտորի կամ այլ միջուկային սարքավորման կամ դրա միջուկային բաղադրիչի ռադիոակտիվ, տոքսիկ, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ վարակիչ օբյեկտները,
- ցանկացած զենք կամ սարք, որն օգտագործում է ատոմային կամ միջուկային ճեղքումը և/կամ հալումը կամ այլ նմանատիպ ռեակցիաներ կամ ռադիոակտիվ ուժեր,
- ռադիոակտիվ, տոքսիկ, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ վարակիչ օբյեկտները կամ ռադիոակտիվությունը:Սույն ենթակետի բացառությունը չի տարածվում միջուկային վառելիքից տարբերվող ռադիոակտիվ իզոտոպների վրա, եթե այդ իզոտոպները պատրաստված, բերված, պահեստավորված կամ օգտագործվում են կոմերցիոն, գյուղատնտեսական, բժշկական, գիտական կամ նմանատիպ խաղաղ նպատակներով,
- ցանկացած քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ էլեկտրամագնիսական զենքի կիրառումը:

5.4.2.15. Ցանկացած պատճառով առաջացած սնկի վնասները: Ինչպես նաև հատուցման ենթակա չեն սնկերի թեստավորման,

- ionizing radiation from radiation contamination, any nuclear fuel, any nuclear waste or ignition of nuclear fuel,
- radioactive, toxic, explosive, other dangerous or contaminating objects of any nuclear installation, reactor, other nuclear device or its nuclear component,
- any weapon or device using atomic or nuclear decay and/or melting or other similar reactions or radioactive forces,
- radioactive, toxic, explosive, or other dangerous or contaminating objects, or radioactivity. The exclusion of this subparagraph does not apply to radioactive isotopes other than nuclear fuel if such isotopes are manufactured, brought in, stockpiled or used for commercial, agricultural, medical, scientific or similar peaceful purposes,
- the use of any chemical, biological, biochemical or electromagnetic weapons.

5.4.2.15. Damage from fungus that appeared for any reason. Including, the costs of testing, monitoring, or determining the existence, concentration, or effects of fungi, the costs of cleaning, removal, or disinfection.

5.4.2.16. Natural disasters, if declaration of insurance area being a zone of natural

մոնիթորինգի կամ առկայության, կոնցենտրացիայի և էֆֆեկտների պարզման ծախսերը, մաքրման, սնկերի հեռացման կամ ախտահանման ծախսերը:

5.4.2.16. Տարերային աղետները, եթե ապահովագրության տարածքը ճանաչվել է որպես տարերային աղետների գոտի՝ նախքան Ապահովագրության պայմանագրի կնքումը:

5.4.2.17. Վնասումները, սխալները, թերությունները և դեֆեկտները, որոնք առկա են եղել Ապահովագրության պայմանագրի կնքման պահին և հայտնի են եղել Ապահովադրին, Շահառուին կամ նրանց ներկայացուցիչներին, բայց չեն հայտնվել Ապահովագրողին:

5.4.2.18. Ապահովադրի շահույթ չստանալը (բաց թողնված եկամուտ), որը հանդիսացել ապահովագրական պատահարի հետևանք:

5.4.3. Պայմանագրով կիրառվում են բացառության հետևյալ դրույթները՝

5.4.3.1. Էլեկտրոնային տվյալների մասին դրույթը՝ NMA 2915:

5.4.3.2. Էլեկտրոնային տվյալներին հասցված վնասի բացառությունը: Չնայած ցանկացած այլ պայմանի, որը բխում է սույն Կանոններից և դրանց Լրացուցիչ պայմաններից, համաձայնեցվում է, որ՝

ա) Սույն Կանոններով Ապահովագրությունը չի հատուցում էլեկտրոնային տվյալների վնասը, վնասումը, ոչնչացումը, աղավաղումը, ջնջվելը, փչանալը կամ փոփոխումը անկախ պատճառից (ներառյալ, բայց չսահմանափակվելով համակարգչային վիրուսով), էլեկտրոնային տվյալների օգտագործման հնարավորության կորուստը, ֆունկցիոնալության կորուստը, ինչպես նաև անկախ բնույթից ցանկացած ծախսերը, որոնք բխում են դրանից, չնայած այլ՝ սույն Կանոններով հատուցվող իրադարձությունների

disasters was until the conclusion of the Contract.

5.4.2.17. Damages, errors, flaws, and defects that existed at the time of conclusion of the Contract and were known to the Insured, the Beneficiary, or their representatives, but have not been declared to the Insurer.

5.4.2.18. Income not received by the Insured (lost profit), which was the result of an insurance accident.

5.4.3. The following provisions of exclusions apply to the Contract:

5.4.3.1. Electronic Data Disclaimer NMA 2915.

5.4.3.2. Exclusion of damage to electronic data. Regardless of any other conditions of the Rules and Additional Conditions, it is agreed that:

a) Insurance under the Rules does not cover loss, damage, destruction, distortion, erasure, corruption, or alteration of electronic data for any reason (including, but not limited to computer virus) or loss of ability to use, loss of functionality, as well as any costs and expenses of any nature arising from this, despite other cases confirmed in the terms of the Contract that could affect the loss amount.

կամ պատճառների, որոնք կարող են ազդել վնասի չափի վրա:

«Էլեկտրոնային տվյալներ» տերմինը նշանակում է փաստերը, հասկացությունները և տեղեկատվությունը, որը ձևափոխվել է այնպիսի վիճակի, որով հասանելի են տվյալների մշակման էլեկտրոնային կամ էլեկտրամեխանիկական միջոցների կամ էլեկտրոնային կառավարմամբ սարքավորման կողմից փոխանցման, վերլուծության և վերամշակման համար և իր մեջ ներառում է ծրագրեր, ծրագրային ապահովում և այլ կոդավորված հրահանգներ՝ տվյալների վերամշակման և կառավարման համար:

«Համակարգչային վիրուս» տերմինը նշանակում է աղավաղող, վնասակար կամ այլ կերպ չարտոնված հրահանգների կամ կոդավորման համակարգերի համախումբը, որը իր մեջ ներառում է չարամտորեն ներմուծված ծրագրային կամ այլ հատկություններով հրահանգներ կամ կոդավորման համակարգեր, որոնք տարածվում են ցանկացած տիպի համակարգչային համակարգի կամ ցանցի միջոցով: «Համակարգչային վիրուս» տերմինը ներառում է, բայց չի սահմանափակվում «տրոյական ձիերով», «որդերով», «տրամաբանական ռումբերով», «ժամանակային մեխանիզմներ ունեցող ականներով»:

բ) Այն դեպքում, երբ ստորև բերված ռիսկերի իրականացման պատճառ է հանդիսացել Ա) ենթակետում նշված իրադարձությունները, սույն ապահովագրությունը՝ մնացած բոլոր պայմանների և բացառությունների պահպանման դեպքում, ծածկում է, ուղղակիորեն ստորև բերված ռիսկերի հետևանքով, ապահովագրված գույքին հասցված վնասը, որը տեղի է ունեցել ապահովագրության գործողության ժամկետում՝

The term "electronic data" means facts, concepts and information transformed into a form available for transmission, analysis and processing by electronic and electromechanical means for data processing or electronically controlled equipment and includes programs, software and other coded commands to process and manage data, or to direct and manage equipment.

The term "computer virus" means a set of distorting, harmful or otherwise unauthorized instructions or coding systems that include a set of maliciously introduced unauthorized instructions or coding systems, software or any other property, that are distributed through a computer system or network of any nature. The term "computer virus" includes, but is not limited to, "trojan horses", "worms", "logic bombs", "time bombs".

b) However, if the reason for the realization of one of the risks indicated below was the occurrence of one of the events described in paragraph a), this insurance, subject to all other conditions and exceptions, will cover damage to the insurance property that occurred during the insurance period, caused directly to the insured property by one of the risks indicated below:

- Fire,
- Explosion.

- Հրդեհ,
- Պայթյուն:

5.4.4. Ինֆորմացիայի կրիչների արժեքի որոշումը: Չնայած սույն Կանոններից և դրանց Լրացուցիչ պայմաններից բխող ցանկացած այլ պայմանի՝ համաձայնեցվում է, որ եթե Ապահովագրության պայմանագրով ապահովագրված ինֆորմացիայի կրիչներին հասցվի Ապահովագրության պայմանագրով ապահովագրված վնաս, ապա արժեքը համարվելու է ինֆորմացիայի դատարկ կրիչինը, որին գումարվում է էլեկտրոնային տվյալների պատճենման արժեքը պահեստային պատճեններից կամ նախորդ սերնդի օրիգինալներից: Տվյալ ծախսերը չեն ներառում էլեկտրոնային տվյալների մշակման, վերականգնման, հավաքագրման կամ համալրման ծախսերը: Եթե ինֆորմացիայի կրիչը ենթակա չէ վերանորոգման, փոխարինման կամ վերականգնման, ապա արժեքի որոշման հիմք է ծառայելու դատարկ կրիչի արժեքը: Սակայն ապահովագրությունը չի ծածկում ցանկացած գումար, որը բնութագրում է այդպիսի էլեկտրոնային տվյալների արժեքը Ապահովադրի կամ ցանկացած երրորդ անձի համար, անգամ եթե նման էլեկտրոնային տվյալները հնարավոր չէ վերստեղծել, հավաքագրել կամ համալրել:

5.4.4. Determination of value of data carriers. The Parties agree that, regardless of other provisions of the Contract, in the event of material damage subject to compensation according to the Contract, the value is the cost of an empty carrier adding the cost of reproducing any electronic data from copies or originals of the previous periods. These costs do not include the costs for recovery, collection, and compilation of electronic data. If the data carrier is not subject to repairment, replacement or restoration, the value is the cost of empty carrier. At the same time, this Contract does not apply to any amounts, relating to the value of the electronic data itself for the Insured or any third person, even if such electronic data cannot be recovered, collected, or compiled.

ԳԼՈՒԽ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

6.1. **Ապահովագրական գումար** է հանդիսանում Ապահովագրության պայմանագրով սահմանված գումարը, որի

CHAPTER 6: SUM INSURED, INSURANCE PREMIUM, INSURANCE RATE, DEDUCTIBLE AMOUNT

6.1. **The sum insured** is the amount of money determined by the Contract, within the limits of which the Insurer is obliged to pay the insurance

սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ելնելով Ապահովագրական գումարից՝ սահմանվում է նաև Ապահովագրավճարի չափը:

6.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության օբյեկտի ապահովագրական (իրական) արժեքի սահմաններում՝ Ապահովադրի դիմումի հիման վրա:

6.3. Ապահովագրական (իրական) արժեք սահմանվում է ելնելով՝

6.3.1. Սույն Կանոնների 3.2.1 կետի մասով՝ շինարարական լրիվ նախագծային (սմետային) արժեքից, ներառյալ՝ նյութերի արժեքը, աշխատավարձերը, տեղափոխման ծախսերը, մաքսային տուրքերը, վճարները, ինչպես նաև Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերի և շինարարական տարրերի արժեքը:

6.3.2. Սույն Կանոնների 3.2.2 կետի մասով՝ մոնտաժման յուրաքանչյուր օբյեկտի լրիվ նախագծային (սմետային) արժեքից, ներառյալ՝ նյութերի արժեքը, աշխատավարձերը, տեղափոխման ծախսերը, մաքսային տուրքերը, վճարները, ինչպես նաև Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերի և շինարարական տարրերի արժեքը:

6.3.3. Սույն Կանոնների 3.2.3, 3.2.4.1 - 3.2.4.2 կետերի մասով՝ շինհրապարակում գտնվող մեքենաներին և մեխանիզմներին, սարքավորումներին, այլ օբյեկտներին համապատասխան նշանակության և տեխնոլոգիական բնութագրերով նոր գույքի իրական/շուկայական արժեքով, մասհանելով այն գումարները, որոնցով նվազել է տվյալ օբյեկտների արժեքը՝ մաշվածության պատճառով:

6.4. Սույն Կանոնների 3.2.4.3 կետում նշված լրացուցիչ ծախսերի մասով՝ Ապահովագրության պայմանագրով սահմանվում է առանձին

compensation upon the occurrence of the insurance accident and, based on which, the amount of the insurance premium is established.

6.2. The sum insured is established by the agreement of the Parties within the insurance (actual) value of the object of insurance based on the application of the Insured.

6.3. The insurance (actual) value is determined based on:

6.3.1. According to Clause 3.2.1 of the Rules - the full design (estimated) cost of construction works, including the cost of materials, wages, transportation costs, customs duties, fees, as well as the cost of materials and building elements supplied by the Customer.

6.3.2. According to Clause 3.2.2 of the Rules - the full design (estimated) cost of each installation object, including the cost of materials, wages, transportation costs, customs duties, fees, as well as the cost of materials and building elements supplied by the Customer.

6.3.3. According to Clauses 3.2.3, 3.2.4.1 - 3.2.4.2 of the Rules - the cost of purchasing new machines and mechanisms, equipment of the construction site, other objects located on the construction site similar in purpose and technological characteristics, minus the amount by which it decreased the cost of these objects due to wearout.

6.4. For the additional expenses specified in Clause 3.2.4.3 of the Rules, in the Contract establishes a separate sum insured, or a limit of

ապահովագրական գումար կամ հատուցման սահմանաչափ՝ սույն Կանոնների 3.2.1 - 3.2.2 կետերում նշված օբյեկտների ապահովագրական գումարի կամ «Նյութական վնաս» բաժնի ընդհանուր ապահովագրական գումարի սահմաններում:

compensation within the sum insured for the objects specified in Clauses 3.2.1 - 3.2.2 of the Rules, or within the total sum insured under the section "Material damage".

6.5. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնությամբ և հանդիսանում է ապահովագրական հատուցման առավելագույն գումարը, որը կարող է հատուցվել ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում՝ երրորդ անձանց վնաս հասցնելու հետ կապված բոլոր ապահովագրական պատահարների մասով: Ապահովագրական գումարի սահմաններում կարող են նշանակվել Ապահովագրողի կողմից հատուցման սահմանաչափեր՝ Ապահովադրի կամ այն անձի, ում պատասխանատվությունն ապահովագրված է՝ ծախսերը հատուցելու մասով՝ կապված երրորդ անձանց կյանքին և առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու հետ:

6.5. Sum insured of civil liability insurance is established by an agreement between the Insurer and the Insured and is the maximum amount of insurance compensation that can be paid for all insurance accidents in connection with the infliction of harm to third parties that occurred during the insurance term. Within the sum insured, the limits of the Insurer's liability may be established on reimbursement of expenses of the Insured or other person whose liability is insured, on compensation for harm to life and health or property of third parties.

6.6. Հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության մասով (3.2.4.4 կետ) Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ՝ շինարարության և/կամ մոնտաժային աշխատանքների արժեքի սահմաններում՝ բոլոր շինմոնտաժային և մեկնարկային աշխատանքներից հետո, ներառյալ՝ նյութերի արժեքները, աշխատավարձերը, փոխադրման ծախսերը, մաքսային տուրքերը և վճարները՝ այդ արժեքը հաստատող փաստաթղթերի հիման վրա:

6.6. Sum insured of post-commissioning warranty liability insurance (Clause 3.2.4.4) is established by the agreement of the Insurer and the Insured within the value of construction and/or installation works after completion of all construction, installation, and commissioning activities, including the cost of materials, wages, transportation costs, customs duties, and fees, based on documents confirming its value.

6.7. Եթե սույն Կանոնների 3.2.1 - 3.2.4 և 3.3.2 կետերում նշվածների դասին դասվող ապահովագրված օբյեկտի ապահովագրական գումարը ավելի փոքր լինի քան իր

6.7. If the sum insured of the insurance object belonging to the category according to Clauses 3.2.1 - 3.2.4 and 3.3.2 of the Rules is less than its insurance value on the date of occurrence of the

ապահովագրական արժեքը ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին, ապա Ապահովագրողը Ապահովադրին հատուցում է վերջինիս կրած վնասները՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ Ապահովագրական գումարի և Ապահովագրական արժեքի հարաբերակցությամբ:

6.7.1. Եթե ուղղակիորեն նշված է Ապահովագրության պայմանագրում, ապա առանձին գույքը և/կամ ծախսերը կարող են ապահովագրվել «առաջին ռիսկի պայմանով»: Այս դեպքում ապահովագրված գույքի (ծախսերի) մասով ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվի չի առնվում Ապահովագրական արժեքի նկատմամբ Ապահովագրական գումարի հարաբերակցությունը՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ:

6.8. Այն դեպքում, երբ Ապահովագրական գումարը գերազանցում է Ապահովագրական արժեքը՝ Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ, ապա Ապահովագրության պայմանագիրը Ապահովագրական գումարի՝ Ապահովագրական արժեքը գերազանցող մասով, համարվում է առոչինչ: Ապահովագրավճարի ավել վճարված մասը այս դեպքում ենթակա չէ վերադարձման: Եթե Կանոնների սույն կետում նշված հանգամանքները՝ Ապահովադրի կողմից Ապահովագրողին խաբեության հետևանք են հանդիսացել, ապա Ապահովագրողն Ապահովագրության պայմանագիրը անվավեր ճանաչել պահանջելու և իրեն հասցված վնասները համար փոխհատուցում պահանջելու իրավունք ունի:

6.9. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին ապահովագրված օբյեկտի մասով գործել են Ապահովագրության այլ պայմանագրեր՝ նմանատիպ ռիսկերով, որոնք

insurance accident, then the Insurer reimburses the Insured for the losses incurred by the latter in proportion to the ratio of the sum insured to the insurance value on the date of occurrence of the insurance accident.

6.7.1. If it is explicitly stated in the Contract, particular properties and (or) expenses may be insured on the condition "first loss". In this case, in respect of the insurance property (expenses) when determining the amount of insurance compensation, the ratio of the sum insured to the insurance value on the date of occurrence of the insurance accident is not considered.

6.8. If the sum insured exceeds the insurance value at the time of conclusion of the Contract, the Contract is considered null and void to the extent of sum insured exceeding insurance value. The overpaid portion of the insurance premium is not refundable. If the circumstances specified in this Clause of the Rules were the result of the Insured deceiving the Insurer, the Insurer has the right to assume the Contract invalid and demand compensation for its losses.

6.9. If, at the time of the occurrence of the insurance accident, other insurance contracts with similar risks were in force in relation to the insurance object for an amount exceeding in total

ընդհանուր առմամբ գերազանցում են վերջինիս ապահովագրական արժեքը (կրկնակի ապահովագրություն), ապա Ապահովագրողը հասցված վնասի ապահովագրական հատուցումը վճարում է՝ իր կողմից կնքված Ապահովագրության պայմանագրի ապահովագրական գումարի՝ տվյալ օբյեկտի մասով Ապահովադրի կողմից կնքված բոլոր Ապահովագրության պայմանագրերի ընդհանուր ապահովագրական գումարի նկատմամբ հարաբերակցության չափով: Եթե կրկնակի ապահովագրությունը Ապահովադրի դիտավորության հետևանք է, ապա Ապահովագրողը՝ Ապահովագրության պայմանագիրը անվավեր ճանաչելու և իրեն հասցված վնասի համար փոխհատուցում պահանջելու իրավունք ունի:

its insurance value (double insurance), the Insurer pays compensation for damages in an amount proportional to the ratio of the sum insured of the Contract to the total sum insured for all insurance contracts of the object in question concluded by the Insured. If the double insurance was the result of the Insured deceiving the Insurer, the Insurer has the right to assume the Contract invalid and demand compensation for its losses.

6.10. Ապահովագրական հատուցում տրամադրելուց հետո Ապահովագրական գումարը նվազում է Ապահովադրին (Շահառուին) վճարված ապահովագրական հատուցման չափով: Վնասված գույքի վերականգնման կամ փոխարինման դեպքում Ապահովագրական գումարի չափը կարող է ավելացվել մինչև նախնական չափը՝ Ապահովագրության պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր կնքելու և լրացուցիչ ապահովագրավճար վճարելու դեպքում:

6.10. After the provision of insurance compensation, the sum insured is reduced by the amount of insurance compensation paid to the Insured (Beneficiary). When restoring or replacing the damaged property, the sum insured may be increased to its initial value via conclusion of an additional agreement to the Contract and payment of additional insurance premium.

6.11. Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ առանձին օբյեկտների և/կամ ռիսկերի մասով կարող է սահմանվել Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափ՝ մեկ ապահովագրական պատահարի մասով և/կամ ապահովագրության ամբողջ ժամկետի համար, և ոչ պայմանական չհատուցվող գումարներ:

6.11. In the Contract with the agreement of the Insurer and the Insured, the limit of the Insurer's liability per insurance case and/or for the entire period of insurance and non-conditional deductibles may be set for separate objects and / or risks.

6.12. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով սույն Կանոնների 3-րդ գլխում նշված

6.12. The insurance premium is calculated based on sum insureds, rates for each insurance object

յուրաքանչյուր օբյեկտի ապահովագրական գումարներից և սակագներից:

6.13. Ապահովագրության օբյեկտների մասով ապահովագրական սակագները սահմանվում են բազային սակագների հիման վրա, որոնց նկատմամբ կիրառվում են ուղղիչ գործակիցներ, որոնք հաշվի են առնում ապահովագրության կոնկրետ պայմանները:

6.14. Ապահովագրավճարի վճարումը իրականացվում է Ապահովադրի կողմից համաձայն Ապահովագրության պայմանագրի պայմանների, կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

6.15. Ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ կամ տարաժամկետ եղանակով՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Եթե Ապահովագրության պայմանագով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվեհամարին գումարի փոխանցման օրը:

6.16. Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել չհատուցվող գումար (Չհատուցվող գումար)՝ վնասի մաս, որը սահմանված է Ապահովագրության պայմանագրով և ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից Ապահովադրին կամ այն անձի, ում շահն ապահովագրված է համաձայն Ապահովագրության պայմանագրի և սահմանվում է ապահովագրական գումարի կամ վնասի չափի որոշակի տոկոսի կամ ֆիքսված գումարի տեսքով: Չհատուցվող գումարի տեսակը և չափը նշվում են Ապահովագրության պայմանագրում (Վկայագրում):

6.16.1. Չհատուցվող գումարը սահմանվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ժամանակ, եթե Ապահովագրության

specified in Section 3 of the Rules.

6.13. Rates for insurance objects are based on base rates to which adjusting coefficients are applied, considering specific conditions of the insurance.

6.14. Payment of the insurance premium is made in a cash and non-cash ways by the Insured in accordance with the terms of the Contract.

6.15. The insurance premium is paid by the Insured at once or in installments in the terms and dates established by the Contract. Unless otherwise is stated in the Contract, the payment date of the insurance premium by the Insured is the day of receipt of money to the current account of the Insurer.

6.16. In the Contract by the agreement between the Insurer and the Insured, deductible amounts (deductible) can be set which are not subject to compensation to the Insured or the person whose interest is insured under the Contract and are either in a form of a percentage or a fixed amount from sum insured or the damage. The deductible type and amount are mentioned in the Contract (Policy).

6.16.1. The deductible amount is set for each insurance accident, if not specified otherwise in the Contract. The damages not exceeding the

պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Չհատուցվող գումարը չգերազանցող վնասը հատուցման ենթակա չէ: Պայմանանական Չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը հատուցում է վնասն ամբողջությամբ, եթե վնասի չափը գերազանցում է Չհատուցվող գումարը: Ոչ պայմանական Չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում՝ ապահովագրական հատուցման չափը որոշվում է որպես վնասի չափի և Չհատուցվող գումարի տարբերություն: Եթե Ապահովագրության պայմանագրում նշված չէ Չհատուցվող գումարի տեսակը, ապա այն համարվում է ոչ պայմանական:

deductible amount are not subject to compensation. In case of conditional deductible, the Insurer fully reimburses the loss, if the loss amount exceeds the deductible. In case of non-conditional deductible, the reimbursement amount is set out as the difference of loss amount and the deductible. If the type of the deductible is not mentioned in the Contract, then it is deemed non-conditional.

6.16.2. Եթե տեղի են ունենում մի քանի ապահովագրական պատահարներ, ապա Չհատուցվող գումարն մասհանվում է յուրաքանչյուր ապահովագրական հատուցման հաշվարկման ժամանակ: Չհատուցվող գումարի կիրառման պայմանները ճշտելու նպատակով հասկանում ենք, որ եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ցանկացած իրադարձություն, որը հանգեցրել է Ապահովագրության օբյեկտի ոչնչացմանը կամ վնասմանը տարերային աղետների հետևանքով, ինչպիսիք են օրինակ՝ մրրիկը, բուքը, փոթորիկը, պտտահողմը, տորնադոն, ջրհեղեղը, սելավը, ցունամին, հրաբխային ակտիվությունը կամ գրունտի շարժը կամ նստվածքը՝ փլուզման հետևանքով, որոնք կապված են նշված տարերային աղետների հետ, ունեցել են մեկ սկզբնապատճառ և տևել են 72 հաջորդական ժամ, դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար և Ապահովագրության պայմանագրով նախատեսված համապատասխան Չհատուցվող գումարն կիրառվում է մեկ անգամ: Սակայն չի թույլատրվում նման երկու և ավելի 72 ժամյա ժամանակահատվածների համընկնում այնպիսի

6.16.2. If multiple insurance accdents occur, the deductible is applied during the calculation of each insurance compensation. In order to clarify the terms of the deductible amount, it shall be understood that unless otherwise provided by the Contract, any event that resulted in the destruction or damage of the insurance object due to natural disasters, such as hurricane, snowstorm, tornado, flood, mudslides, tsunamis, volcanic activity or landslides or settling due to collapses associated with these natural disasters, have had single initial cause, lasted 72 consecutive hours are considered as one insurance accident and the deductible prescribed by the Contract is applied once. However, two such periods of more than 72 hours are not allowed to coincide in the event of damage caused by a longer period of time. Such interpretation of an event (insurance accident) shall also apply to the compensation limits set by the Contract in the events specified in this clause.

վնասի դեպքում, որը տևել է ավելի տևական ժամանակ: Իրադարձության (Ապահովագրական պատահարի) նման մեկնաբանումը կիրառվում է նաև Ապահովագրության պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափերի մասով այն իրադարձություններով, որոնք նշված են սույն կետով:

6.16.3. Եթե մեկ ապահովագրական պատահարի արդյունքում վնասվում են մի քանի ապահովագրված օբյեկտներ կամ օբյեկտների խմբեր, որոնց համար Ապահովագրության պայմանագրում նախատեսված են առանձին Չհատուցվող գումարներ, ապա հատուցման հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում յուրաքանչյուր այդպիսի օբյեկտի կամ օբյեկտների խմբի համար սահմանված Չհատուցվող գումարները:

6.16.3. If, as a result of one insurance accident, several insurance objects or groups of objects are damaged, for which separate deductible amounts are prescribed in the Contract, the deductibles defined for each such object or group of objects are taken into account.

6.16.4. Եթե մեկ ապահովագրական պատահարի արդյունքում վնասվում է օբյեկտը կամ օբյեկտների խումբը այն իրադարձության կամ պատճառի արդյունքում, որոնց մասով Ապահովագրության պայմանագրում սահմանված են տարբեր Չհատուցվող գումարներ, ապա նման ապահովագրական պատահարի հատուցումը հաշվարկելիս հաշվի է առնվում սահմանված Չհատուցվող գումարներից ամենամեծը:

6.16.4. If, as a result of one insurance accident, the object or group of objects is damaged as a result of an event or trigger for which different deductibles are defined in the Contract, the largest deductible amount is taken into account when calculating the compensation for such an insurance accident.

ԳԼՈՒԽ 7: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

CHAPTER 7: CONTRACT CONCLUSION PROCEDURE, OPERATING TERMS AND TERMINATION PROCEDURE

7.1. **Ապահովագրության պայմանագիրը** հանդիսանում է Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնագիր, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին կամ այլ անձին, որի օգտին կնքվել է ապահովագրության պայմանագիրը, վճարել ապահովագրական հատուցում, իսկ Ապահովադիրը պարտավորվում է վճարել ապահովագրավճարը

7.1. **The Contract** is an agreement between the Insurer and the Insured, by virtue of which the Insurer obliges to make an insurance payment upon the occurrence of an insurance accident to the Insured or other person, in whose favor the Contract is concluded in, and the Insured undertakes to pay the insurance premium within the terms established by the Contract. The Contract may contain other conditions determined

Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետներում: Ապահովագրության պայմանագիրը կարող է պարունակել նաև կողմերի համաձայնությամբ որոշվող այլ պայմաններ և պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված գործարքի վավերականության ընդհանուր պայմաններին:

by the agreement of the Parties, and must meet general conditions of validity of the transaction provided for by the civil legislation of the Republic of Armenia.

7.2. Սույն Կանոններով Ապահովագրության պայմանագիր կնքելիս, Կանոնների պայմանները դառնում են Ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովադրի և Ապահովագրողի համար: Ապահովադիրը կարող է պայմանավորվել Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագրի բովանդակությունից սույն Կանոնների առանձին դրույթներ բացառելու և ապահովագրության պայմանագիրը սույն Կանոններում պարունակվող պայմաններից տարբերվող պայմաններով լրացնելու մասին:

7.2. When concluding an insurance contract based on the terms of the Rules, the conditions thereof become an integral part of the Contract and are binding for the Insured and the Insurer. The Insured may agree with the Insurer to exclude certain provisions of the Rules from the content of the Contract and to add conditions different from those contained in the Rules to the Contract.

7.3. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված սույն Կանոններում պարունակվող պայմաններով այն դեպքում, երբ հենց Պայմանագրում ուղղակիորեն նշվում է դրանց կիրառումը և Կանոնները կցվում են պայմանագրին: Ապահովադրին Կանոնների հանձնումը պայմանագիրը կնքելիս հավաստվում է Ապահովագրության պայմանագրում համապատասխան գրառմամբ:

7.3. An insurance contract is concluded on the conditions contained in the Rules in if the Contract expressly indicates their application and the Rules are attached to the Contract. Delivery to the Insured of the Rules at the conclusion of the Contract is attested by a corresponding entry in the Contract.

7.4. Ապահովագրության ենթակա գույքի պահպանման շահը ապացուցելու համար Ապահովագրողը իրավունք ունի Ապահովադրից պահանջել հետևյալ փաստաթղթերը, բայց չսահմանափակվելով՝

7.4. To determine a property interest in the preservation of property subject to insurance, the Insurer has the right to demand from the Insured the following documents, including but not limited to:

7.4.1. ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ.

- շինարարության թույլտվություն,

7.4.1. in respect of insured construction and installation works:

- building permit,

- շինարարական կապալի պայմանագիր,

7.4.2. ապահովագրված այլ գույքի նկատմամբ.

- առքուվաճառքի պայմանագիր,
- տեղեկանք կազմակերպության հաշվապահական հաշվառման վերաբերյալ,
- լիզինգի/գրավի պայմանագիր, կամ գույքային շահը հաստատող այլ փաստաթուղթ:

Ապահովագրության պայմանագրի կնքման պահին Ապահովադրի մոտ Շահառուի գույքային շահը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում, Ապահովագրության պայմանագիրը կնքվում է առանց Շահառուի անունը կամ անվանումը նշելու: Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Շահառուին ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է միայն վերջինիս մոտ գույքային շահը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

7.5. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրն Ապահովագրողին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

7.5.1. Իրավաբանական անձ Ապահովադիրները Ապահովագրողին ներկայացնում են փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս սահմանել հետևյալ տեղեկությունները.

- անվանումը,
- հարկ վճարողի հաշվառման համարը կամ օտարերկրյա կազմակերպության ծածկագիրը (այսուհետ ՝ ԿԳՆ),
- պետական գրանցման համարը,
- պետական գրանցման ամսաթիվը և վայրը,
- գրանցող մարմնի անվանումը,
- գտնվելու հասցեն (իրավաբանական հասցե),
- փաստացի հասցեն,

- construction contract,

7.4.2. in respect of other insurance property:

- purchase and sale agreement,
- certificate of accounting registration of the organization,
- leasing / pledge agreement; or other document confirming the property interest.

If the Insured does not have documents at the time of conclusion of the Contract, confirming the property interest of the Beneficiary, the Contract is concluded without specifying the name of the Beneficiary. In the event of an insurance accident, payment of insurance compensation to the Beneficiary is carried out only if the latter holds documents indicating property interest.

7.5. At the conclusion of the Contract, the Insured provides the Insurer the following documents:

7.5.1. Legal person Insureds present to the Insurer documents that allow determining the following information:

- name,
- taxpayer identification number or code of a foreign organization (hereinafter - FEC),
- state registration number,
- date and location of state registration,
- name of the registering authority,
- address of the location (legal address),
- actual address,
- postal address,
- beneficial owners,
- sole executive body,

- փոստային հասցե,
- շահառուներին,
- միանձնյա գործադիր մարմինը,
- ՀՀ ռեզիդենտություն / ոչ ռեզիդենտությունը,
- կոնտակտային անձի Ա.Ա.Հ., հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն:

- residency/non-residency in the Republic of Armenia,
- contact person's name/surname/father's name, phone, e-mail address.

7.6. Ապահովագրության պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով վերջինիս է տրամադրում իր կողմից ստորագրված դիմումը՝ հավելվածներով (լրացուցիչ հարցաթերթիկներով) համապատասխան ձևաթղթի վրա կամ ազատ ձևով՝ նշելով դիմումի ձևաթղթի և սույն Կանոններով նախատեսված տեղեկությունները (եթե Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր դիմումի հիման վրա): Դիմումում, ինչպես նաև դրան կից հավելվածներում Ապահովադիրը պարտավոր է նշել ապահովագրության օբյեկտի մասին ճշգրիտ և ամբողջական տեղեկություններ և անհրաժեշտ այլ տեղեկատվություն՝ դիմումի ձևաթղթի վավերապայմաններին համապատասխան: Դիմումում, ինչպես նաև դրա հավելվածներում Ապահովադրի կողմից նշած ապահովագրության օբյեկտի մասին տեղեկությունները, համարվում են ռիսկի աստիճանը որոշելու և Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագիր (Վկայագիր) կնքելու մասին որոշում կայացնելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ:

7.6. In order to conclude the Contract, the Insured shall, at the request of the Insurer, provide the latter a signed application with attachments (additional questionnaires) on the relevant form or free format, specifying the information on the application form and required by the Rules (if the Contract is concluded on the basis of a written application). In the application, as in its attachments, the Insured is obliged to provide accurate, complete information about the insurance objects, other necessary information in accordance with the requisites of the application form. The information on the insurance objects mentioned by the Insured in the application, as well as in its attachments, are considered to be essential circumstances for determining the degree of risk and for the Insurer to make a decision on concluding the Contract (Policy).

7.7. Բացի դիմումի ձևաթղթով նախատեսված տեղեկություններից, Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի աստիճանը, ապահովագրական պատահարի առաջացման

7.7 In addition to the information provided in the application form, the Insured is required to provide other information required by the Insurer about the relevant circumstances for determining the degree of risk, the probability of occurrence of an insurance accident and the extent of possible damages in written form. This information

հավանականությունը և դրա տեղի ունենալու հետևանքով հնարավոր վնասների չափը որոշելու համար: Նման տեղեկատվությունը ներառում է հետևյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվում են Ապահովադրի կողմից Ապահովագրողի հարցումով՝

- կապալի պայմանագիր,
- խոշոր տարրերի և աշխատանքների տեսակների նախագծի ընդհանուր արժեքի բաշխում,
- կապալառուների ցանկ՝ նշելով նրանցից յուրաքանչյուրի կողմից կատարվող աշխատանքների տեսակներն ու արժեքը, նմանատիպ աշխատանքների կատարման փորձի մասին տեղեկատվությունը,
- ծրագրի բացատրական նշումներ,
- օբյեկտի վիճակի տեխնիկական փորձաքննություն,
- շինարարության տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտության հաշվետվություն,
- ծրագրի կազմակերպական կառուցվածք,
- նախագծի գծագրեր և առանձնահատկություններ (ընդհանուր պլան մասշտաբով, իրավիճակային պլան (անհրաժեշտության դեպքում, նշելով երրորդ կողմի օբյեկտները), ֆասադների, կտրվածքների գծագրեր, առավել բնորոշ հատվածներ),
- արտադրական գործընթացի դիագրամ,
- հիմնական արտադրական սարքավորումների ցանկ՝ ըստ ապրանքանիշի, մոդելի, արտադրողի և արժեքի,
- աշխատանքների և օգտագործվող նյութերի և սարքավորումների որակի ապահովման ընթացակարգեր,
- գործարկման և փորձարկման ընթացակարգերի նկարագրություն,

includes the following documents, which are provided by the Insured at the request of the Insurer:

- construction contract,
- breakdown of the total project cost by major elements and work types,
- list of contractors indicating the types and cost of work performed by each of them, information about the experience of performing similar works,
- explanatory notes to the project,
- technical examination of the object's condition,
- report on engineering and geological survey of the construction site,
- organizational structure of the project,
- blueprints and specifications of the project (scaled master plan, situational plan (if necessary, with indication of objects of third parties), blueprints of facades, sections, the most specific sections),
- diagram of the production process,
- list of the main production equipment with its brand, model, manufacturer, and cost,
- procedures for ensuring the quality of works, used materials and equipments,
- description of commissioning and testing procedures,
- work schedule and monthly reports,

- աշխատանքի ժամանակացույց և ամսական հաշվետվություններ,
- ջրա-, էլեկտրամատակարարման և այլ ինժեներական համակարգերի սխեմաներ, ներառյալ հիմնական սարքավորումների ցանկով ժամանակավոր միացումներ (տրանսֆորմատորներ, պոմպեր),
- հրշեջ ջրագծի սխեմաներ, մոտակա մասնագիտական հրդեհային մասի գտնվելու վայր,
- ռիսկերի կառավարման ռազմավարություն, ռիսկերի վերլուծություն, վթարափրկարարական միջոցառումների պլաններ,
- անվտանգության տեխնիկա, աշխատանքի ընդունման համակարգ, կապալառուների հսկողություն,
- թանկարժեք նյութերի/տարրերի պահպանման կազմակերպում և պաշտպանության միջոցներ,
- շինարարության օբյեկտի ընթացիկ վիճակի նկարագրություն,
- շինհրապարակին մոտ գտնվող երրորդ անձանց օբյեկտների նկարագրություն (ապահովագրության տարածքներ),
- երրորդ անձանց վնաս պատճառելը կանխելու նախազգուշական միջոցների նկարագրություն,
- տվյալներ տեղի ունեցած վնասների, պատահարների, դժբախտ պատահարների մասին,
- աշխատանքի թույլտվության վկայական,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են աշխատանքների իրականացման ժամանակ, անվանումներ, գույքագրման/գործարանային համարներ, թափքի/շարժիչի համար, թողարկման

- schemes of water, power supply and other engineering systems, including temporary connections of main equipment (transformers, pumps),
- fire water supply schemes, the location of the nearest professional fire station,
- risk management strategy, risk analysis, emergency response plans,
- safety precautions, work admission system, contractor control,
- organization of storage and protection of expensive materials/elements,
- description of the current state of the construction object,
- description of objects of third parties located near the construction site (insurance area),
- description of precautionary measures to prevent damages to third parties,
- data on occurred losses, accidents, personal accidents,
- work permit certificate,
- information about used construction machinery and equipment, its names, inventory/serial numbers, body/engine number, year of manufacture, value and documents based on which the value, sum insureds and owners are determined, documents confirming the registration of the machinery and equipment in the manner prescribed by the current

տարի, արժեք և փաստաթղթեր, որոնց հիման վրա սահմանվել են արժեքը, ապահովագրական գումարները և սեփականատերերի անվանումները, տվյալ տեխնիկայի և սարքավորումների գրանցումը հաստատող փաստաթղթեր՝ գործող նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով (այդ թվում՝ բարձր վտանգավորության օբյեկտի գրանցումը հաստատող փաստաթղթեր), ➢ տեղեկատվություն շինանյութերի և սարքավորումների փոխադրման պայմանների մասին, այն է՝ տեղափոխվող նյութերի և սարքավորումների անվանումը, բնութագրերը, փաթեթավորման տեսակը, պահպանության պայմանները, մեկ բեռնափոխադրման արժեքը, փոխադրման երթուղին, տրանսպորտի տեսակը, տեղադրման եղանակը, իրականացվում է արդյոք միջանկյալ պահպանություն, ում ուժերով է իրականացվում փոխադրումը, փոխադրումների վնասների վիճակագրություն:	regulatory documents (including documents confirming registration of an object of increased hazard), ➢ information on the conditions of transportation of building materials and equipments, namely its names, characteristics of transported materials and equipments, type of packaging, protection measures, cost of one cargo transportation, route of transportation, transport type, method of placement, whether intermediate protection is carried out, whose doing the transportation, statistics on losses from transportation.
7.8. Եթե Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը սույն Կանոնների 7.6 և 7.7 կետերում նշված ռիսկի աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հայտնել (նշել) է ոչ հավաստի (կեղծ) և/կամ ոչ ամբողջական տեղեկատվություն (տեղեկություններ), ապա տեղի ունեցած իրադարձությունը, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու պահանջ ներկայացնելու համար, չի ճանաչվում ապահովագրական պատահար, և Ապահովադրի	7.8. If, after the conclusion of the Contract, it is established that the Insured has provided (indicated) unreliable (false) and/or incomplete information (details) about the circumstances that are essential for determining the degree of risk referred to in Clauses 7.6. and 7.7. of the Rules, then an event that may serve as a basis for presentation to the Insurer claims for payment of insurance compensation is not recognized as an insurance accident and the losses of the Insured (Beneficiary) are not subject to compensation by the Insurer.

(Շահառուի) վնասները ենթակա չեն հատուցման Ապահովագրողի կողմից:

7.9. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրը հաստատում է, որ շինհրապարակում պահպանվում են գործող նորմատիվ փաստաթղթերը (այդ թվում՝ ապահովագրված օբյեկտներում աշխատանքների իրականացման ժամանակ անվտանգության տեխնիկայի կանոնները, ապահովագրված գույքի պահպանման, շահագործման և սպասարկման հրահանգները, ապահովագրված շինարարական տեխնիկայի և սարքավորումների հավաքման/մոնտաժման, շահագործման և սպասարկման հարցերը կարգավորող փաստաթղթերը, վտանգավոր արտադրական օբյեկտների անվտանգության կանոնները, որոնցում օգտագործվում են ամբարձիչ կառույցները, ինչպես նաև Ապահովադիրը հաստատում է, որ շինհրապարակում պահպանվում են բոլոր պետական և գերատեսչական նորմատիվ փաստաթղթերի կանոնները), որոնք կարգավորում են ապահովագրված գույքի օգտագործման և շահագործման կարգն ու պայմանները և կոնկրետ աշխատանքների իրականացումը: Ապահովադիրը տեղեկացված է, որ իր կողմից սույն կետում նշված փաստաթղթերի պահանջները չպահպանելու դեպքում՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու պահանջ ներկայացնելուն, չի համարվի ապահովագրական պատահար, և Ապահովադրի (Շահառուի) վնասները ենթակա չեն լինի հատուցման Ապահովագրողի կողմից:

7.9. At the Contract conclusion, the Insured confirms that the construction site complies with current regulatory documents (including the safety regulations of works at the insurance objects, instructions for storage, operation and maintenance of the insurance property, documents regulating assembly / installation, operation and maintenance of insured construction machinery and equipment, safety regulations for hazardous production facilities where lifting structures are used and the Insured confirms that other federal and departmental regulations are kept in the construction site), which regulate the procedure and conditions of use and exploitation of the insurance property and implementation of specific works. The Insured is notified that in the event of not complying with the requirements of the documents specified in this clause, which entailed the occurrence of an event that has signs of an insurance accident, that may serve as a basis for filing a claim to the Insurer for payment of insurance compensation is not recognized as an insurance accident and the Insured's (Beneficiary's) losses are not subject to reimbursement by the Insurer.

7.10. Ապահովագրողի հետ համաձայնեցնելու դեպքում՝ Ապահովադիրն իրավունք ունի տրամադրել ինչպես բնօրինակները կամ

7.10. The Insured, in agreement with the Insurer, has the right to provide both the originals and duly certified copies, as well as simple paper or

պատշաճ կերպով հաստատված պատճենները, այնպես էլ սույն Կանոններում նշված փաստաթղթերի թղթային կամ էլեկտրոնային (սկանավորված) պատճենները: Վերջին դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել (այդ թվում՝ ծանոթանալու համար) թղթային կամ էլեկտրոնային (սկանավորված) պատճենների տեսքով իրեն ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

electronic (scanned) copies of the documents specified in the Rules. In the latter case, the Insurer has the right to request (including - for review) the originals of documents submitted to them in the form of simple paper or electronic (scanned) copies.

7.11. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ (պայմանագիր) կազմելու կամ Ապահովադրին Ապահովագրողի կողմից, վերջինիս գրավոր դիմումի հիման վրա դրա Ապահովագրության վկայագրի հանձնելու միջոցով՝ դրա համար լիազորված անձի կողմից Ապահովագրողի անունից ստորագրությամբ:

7.11. The Contract is concluded in writing by drawing up one document (Contract) or presenting the Contract to the Insured by the Insurer based on the former's written application and signed on behalf of the Insurer by an authorized person.

7.12. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է դրանում նշված ժամկետով, որը համապատասխանում է շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակին և սահմանված է դրանց կատարման պայմանագրով (Կապալի պայմանագրով), եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այն դեպքում, եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրություն, ապա ապահովագրության ընդհանուր ժամկետն ավելանում է այդ պարտավորությունների ապահովագրության ժամկետով:

7.12. The Contract is concluded for the period specified in it, which corresponds to the period performance of construction and installation works stipulated in the contract for their implementation (construction contract), unless otherwise provided by the Contract. If the Contract provides coverage for insurance of post-commissioning warranty liabilities, then the general term of insurance is increased for the term of insurance for these obligations.

7.13. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրում որպես ապահովագրության ժամկետի սկզբի ամսաթիվ նշված օրվա ժամը 00:00-ից, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից ապահովագրավճարի կամ նրա առաջին մասի վճարման օրվան հաջորդող

7.13. Unless otherwise provided by the Contract, the Contract shall enter into force from 00:00 of the date specified in the Contract as the date of the beginning of the insurance period, but not earlier than the day, following the day of payment by the Insured of the insurance premium or its first installment and is valid until 23:59 of the date indicated in the Contract as the date of expiration

օրը և գործում է մինչև Ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթիվ նշված օրվա 23:59-ը: Ապահովագրավճարը կամ դրա առաջին մասը չվճարելու դեպքում (տարաժամկետ վճարման դեպքում) Ապահովագրության պայմանագրով նախատեսված չափով և ժամկետներում, այն ուժի մեջ չի մտնում և չի հանգեցնում Կողմերի համար որևէ իրավական հետևանքների:

of the insurance period. In case of failure to make a payment of the insurance premium or its first installment (when paid in installments) in the amount and on time,
provided for by the Contract, the Contract does not enter into force and does not yield any legal consequences for the Parties.

7.14. Ապահովագրության գործողությունը, Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայմանով, սկսվում է աշխատանքների սկսվելուց կամ շինհրապարակում ապահովագրված օբյեկտների բեռնաթափումից անմիջապես հետո, բայց ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.14. The validity of the insurance, conditioned upon the entry into force of the Contract, begins immediately after the commencement of construction works or the unloading of insurance objects in the construction site, but not before the date of entry into force of the Contract unless otherwise specified in the Contract.

7.15. Եթե Ապահովագրության պայմանագրում ուղղակիորեն նշված չէ, որ սույն կետի դրույթները չեն կիրառվում, ապա Ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է հետևյալ ամսաթվերից ավելի վաղ վրա հասած օրը՝

- շինարարության/մոնտաժման օբյեկտի ընդունման ավարտի ամսաթիվը պատվիրատուի կողմից շինարարության ավարտված օբյեկտի «Ավարտական ակտ»-ի հիման վրա,
- շինարարության/մոնտաժման օբյեկտի շահագործման ամսաթիվը կամ փաստացի շահագործումը սկսելու ամսաթիվը,
- փորձնական շահագործման ավարտի կամ ծանրաբեռնվածության տակ փորձարկման ավարտի ամսաթիվը,
- փորձարկման մեկնարկի օրվանից չորս շաբաթ հետո (եթե այլ բան

7.15. Unless the Contract explicitly states that the provisions of this Clause do not apply,
the Insurer's liability in respect of insured construction works of the Contract shall be terminated on the earlier of the following dates:

- date of completion of acceptance of the construction/installation object indicated in the act of acceptance of the completed construction object by the Customer,
- date of commissioning of the construction/installation object or the date of commencement of the actual exploitation,
- date of completion of the trial operation or the end of the load test,

համաձայնեցված չէ Պայմանագրի պայմաններով),

- Ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության ժամանակաշրջանի ավարտի ամսաթիվը, որը նշված է Ապահովագրության պայմանագրում: Եթե կառուցվող (մոնտաժվող) օբյեկտի մի մասը կամ մեկ կամ մի քանի միավոր սարքավորումները հանձնվում են պատվիրատուին կամ շահագործման են հանձվում, կամ ենթարկվում են փորձարկման, ապա դադարեցվում է օբյեկտի համապատասխան մասի կամ սարքավորումների համապատասխան միավորների ծածկույթը, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով, իսկ օբյեկտի մնացած մասերի (սարքավորումների միավորների) ծածկույթը պահպանվում է, բայց ոչ ուշ, քան ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինարարական-մոնտաժային աշխատանքների ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթիվը: Օգտագործված առարկաների նկատմամբ ապահովագրությունը դադարեցվում է փորձարկումներ սկսելուց անմիջապես առաջ:

- four weeks from the date of commencement of the tests (unless otherwise indicated in the Contract),

- the end of the insurance period in respect of the insured construction and installation works of the Contract. If part of the object under construction (installation), or one or more pieces of equipment are transferred to the customer or put into exploitation, or are subjected to a trial test, then the coverage of the relevant part of the object or the corresponding unit of equipment is terminated, unless otherwise provided by the Contract, while insurance coverage for the remaining parts of the object (unit of equipment) continues, but not later than the date of the end of the insurance period in respect of insured construction and installation works under the Contract. With regard to formerly used items, the insurance is terminated immediately before the start of the trial tests.

7.16. Ապահովագրության պայմանագրով Ապահովադիր կամ Շահառու հանդիսացող շինարարական կապալառուի հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ժամանակահատվածը սկսվում է Ապահովագրության պայմանագրում նշված հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ժամանակաշրջանի սկզբի ամսաթվից, բայց ոչ

7.16. The period of insurance of post-commissioning warranty liabilities of the construction works of the contractor, who is the Insured or the Beneficiary under the Contract begins from the date of the beginning of the period of insurance of post-commissioning warranty liabilities mentioned in the Contract, but not earlier than the date of the actual commencement of the abovementioned obligations

շուտ, քան շինարարական կապալի պայմանագրով վերը նշված պարտավորությունների փաստացի սկսման ամսաթիվը և ավարտվում է Ապահովագրության պայմանագրում որպես հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ժամանակաշրջանի ավարտի ամսաթիվ նշված օրվա 23:59, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ժամանակահատվածում, ապա վերջինիս գործողության ժամանակահատվածը համընկնում է վերոհիշյալ հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ժամանակահատվածի հետ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

of construction contract and ends at 23:59 of the date specified in the Contract as the date of the end of the insurance period of post-commissioning warranty liabilities, if not provided otherwise in the Contract.

If the Contract provides civil liability insurance during the period of post-commissioning warranty liabilities, the period of its validity is the same as the period of insurance of the above-mentioned post-commissioning warranty liabilities, unless provided otherwise in the Contract.

7.17. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է այն դեպքում, երբ Ապահովագրողը կատարում է իր պարտավորությունները Ապահովադրի առջև Պայմանագրով սահմանված լրիվ ծավալով (այդ պարտավորությունների կատարման պահից), ինչպես նաև այլ դեպքերում, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոններով և Ապահովագրության պայմանագրով:

7.17. The Contract shall be prematurely terminated if the Insurer in full fulfills its obligations to the Insured under the Contract (from the moment of fulfillment of these obligations), as well as in other cases provided for by the legislation of the Republic of Armenia, the Rules, and the Contract.

7.18. Ապահովագրության պայմանագիրը դադարում է մինչև ապահովագրության ժամկետի լրանալը, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի առաջացման հնարավորությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է այլ հանգամանքներով, քան ապահովագրական

7.18. The Contract shall be terminated before its maturity, if after its entry into force, the possibility of occurrence of the insurance accident has ceased, and the existence of the insurance risk ceased due to circumstances other than the insurance accident (for example, the loss of the insurance property due to reasons other than the

պատահարը (օրինակ ՝ ապահովագրված գույքի ոչնչացումը այլ պատճառներով, քան ապահովագրական պատահարի տեղի ունենալը): Ընդ որում, Ապահովագրողն իրավունք ունի վճարում պահանջել ապահովագրավճարի մի մասի նկատմամբ՝ համաչափ այն ժամանակահատվածին, որի ընթացքում գործել է ապահովագրությունը: Շինարարական աշխատանքները ժամանակից շուտ ավարտելու դեպքում ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:

occurrence insurance accident). Meanwhile, the Insurer is entitled to a part of the insurance premium in proportion to the time during which insurance was valid. In case of early completion of the construction works, the insurance premium is not subject to refund.

7.19. Ապահովադիրն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել Ապահովագրության պայմանագրից, ընդ որում, Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:

7.19. The Insured has the right to terminate the Contract at any time, while the paid insurance premium by the Insured is not subject to refund.

7.20. Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել Ապահովագրության պայմանագրից՝ օրենսդրությամբ և Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերում: Ընդ որում, նա Ապահովադրին վերադարձնում է վերջինիս կողմից վճարված ապահովագրավճարն՝ ապահովագրության չավարտված ժամանակահատվածին համամասնորեն: Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մտադրության մասին Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին գրավոր տեղեկացնել Ապահովագրության պայմանագրի դադարեցման ենթադրվող ամսաթվից առնվազն 30 օր առաջ: Սույն կետը չի տարածվում Կանոնների 8.2.1 կետի համաձայն ռիսկի աստիճանի փոփոխության հետևանքով Ապահովագրության պայմանագրի դադարեցման պահանջի դեպքերի վրա:

7.20. The Insurer has the right to unilaterally terminate the Contract in cases stipulated by the legislation and the Contract. Meanwhile, the Insurer fully returns to the Insured the insurance premium paid by the latter in proportion to the unexpired period of the insurance. The Insurer is obliged in writing to notify the Insured about the intention to terminate the Contract at least 30 days prior to the expected date of termination of the Contract. This clause does not apply to cases of termination of the Contract due to changes in the degree of risk in accordance with Clause 8.2.1 of the Rules.

7.21. Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսվում է վերջինիս այլ պահից ուժի մեջ մտնելը, և ամբողջ ապահովագրավճարը կամ դրա

7.21. If the Contract enters into force at another time, and the total insurance premium or its first installment has not been paid within a specified

առաջին մասը սահմանված ժամկետում չի վճարվել, Ապահովագրողը իրավասու է միակողմանի դադարեցնել պայմանագիրը՝ Ապահովադրին ուղարկելով գրավոր ծանուցագիր: Այս դեպքում պայմանագրի դադարեցման ամսաթիվ է համարվում ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման ամսաթիվը:

time limit, the Insurer is entitled to unilaterally terminate the Contract by sending a written notice to the Insured. In this case, the termination date of the Contract is the date of the payment of the insurance premium specified in the Contract or its first installment.

7.22. Եթե ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ չի մտել Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագիրը դադարեցնելու իրավունքի առաջացման պահին՝ սույն կետով սահմանված կարգով, ապա պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած և կողմերի համար որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում:

7.22. When the Contract has not entered into force at the time of the inception of the Insurer's right to terminate the Contract, then the Contract is deemed not entered into force and does not entail any legal consequences for the Parties in accordance with the procedure defined by this clause.

ԳԼՈՒԽ 8: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

8.1.1. Ստանալու ապահովագրական հատուցում ապահովագրական գումարի սահմաններում՝ վնասի իրական չափով՝ Ապահովագրության պայմանագրում սահմանված պայմաններին համապատասխան,

8.1.2. Դադարեցնել Ապահովագրության պայմանագիրը՝ սույն Կանոնների 7.18 և 7.19 կետերի համաձայն:

8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովագրողին՝ վերջինիս պահանջով, հայտնել ռիսկի աստիճանը բնութագրող տեղեկատվություն,

8.2.2. Տեղեկացնել Ապահովագրողին տվյալ ապահովագրության օբյեկտի վերաբերյալ բոլոր կնքված կամ կնքվող ապահովագրության պայմանագրերի մասին,

CHAPTER 8: THE RIGHTS AND THE OBLIGATIONS OF THE PARTIES

8.1. The Insured has the right to:

8.1.1. Receive insurance compensation in the amount of actual damage within the limits of the sum insured and in accordance with the conditions stipulated by the Contract,

8.1.2. To terminate the Contract in accordance with clauses 7.18 and 7.19 of the Rules.

8.2. The Insured is obliged to:

8.2.1. At the conclusion of the Contract, at the request of the Insurer share information, characterizing the degree of risk,

8.2.2. Inform the Insurer about all concluded or to be concluded insurance contracts in respect of insurance objects,

8.2.3. Վճարել ապահովագրավճարը Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,

8.2.4. Ձեռնարկել բոլոր ողջամիտ կանխարգելիչ միջոցները, պահպանել Ապահովագրողի բոլոր գրավոր առաջարկությունները՝ վնասը կանխելու համար, ինչպես նաև օրենսդրական և նորմատիվ ակտերի պահանջները և նյութերի և սարքավորումների արտադրողի առաջարկությունները,

8.2.5. Գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ապահովագրության պայմանագիր կնքելիս հայտնած հանգամանքներում կատարված փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են ազդել ռիսկի աստիճանի ավելացման վրա, այդպիսի փոփոխությունների առաջացման պահից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր հետո: Տվյալ պարտականությունը պատշաճ կատարելու փաստը պետք է հաստատվի գրավոր ապացույցով: Սույն Կանոնների 7.6 և 7.7 կետերում նշված ռիսկի աստիճանի փոփոխման վրա ազդող հանգամանքներ են՝

- շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության (կապալառուի, ենթակապալառուի) փոխարինում,
- շինմոնտաժային աշխատանքների անցկացման ժամկետների փոփոխություն,
- շեղում շինմոնտաժային աշխատանքների անցկացման ժամանակացույցից,
- օբյեկտի պահպանության պայմանների, հակահրդեհային անվտանգության պայմանների, ինչպես նաև ապահովագրված գույքի անվտանգության և պաշտպանության այլ միջոցների վատթարացում,
- ինքնակարգավորվող շինարարական կազմակերպությունների կողմից տրվող

8.2.3. Pay the insurance premium in the amount, procedure and terms prescribed by the Contract,

8.2.4. Take all reasonable precautions, follow all written recommendations of Insurer for the prevention of damage, as well as the requirements of legislative and regulatory acts and recommendations of the manufacturer of the materials and equipment,

8.2.5. Notify the Insurer in writing of changes in the conditions reported during the conclusion of the Contract if these changes may increase the degree of risk, not later than 5 (five) working days from the date of occurrence of such changes. Fact of due fulfillment of this obligation must be confirmed by written evidence. To conditions affecting the degree of risk, in addition to those specified in clauses 7.6 and 7.7 of the Rules include:

- replacement of the organization carrying out construction and installation works (Contractor, subcontractor),
- change in terms of construction and installation works,
- deviations from the schedule of construction and installation works,
- deterioration of the conditions of protection of the object, of fire extinguishing, as well as of other measures of safety and protection in respect of the insurance property,

աշխատանքների թույլտվության կամ շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցում,

- տեխնոլոգիաների, մեթոդների, աշխատանքների իրականացման հնարքների, աշխատանքների կատարման ռեժիմի, գործողությունների և ընթացակարգերի հաջորդականության փոփոխություն, շինարարական նյութերի ընտրության փոփոխություն՝ նախագծով նախատեսված նյութերի, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների անցկացման համաձայնեցված նախագծի և/կամ գործող շինարարական նորմերի և կանոնների այլ փոփոխություններ,
- վերանախագծում և/կամ լրացուցիչ նախագծում,

- suspension of the permission certificate issued by self-regulatory construction organizations, or licenses of the organization performing construction and installation works,

- changes in technology, methods, methods of work implementation, mode of work, sequences of operations and procedures; the choice of building materials by comparison with the materials provided by the project; as well as any other changes from the agreed project for construction and installation works and/or with norms and regulations of current construction practice,

- redesign and/or additional design.

8.2.6. Ռիսկի աստիճանի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին ծանուցելիս Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջելու Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն, լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ պայմանագրի դադարեցում: Լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից կամ պայմանագրի պայմանների փոփոխություն կատարելուց Ապահովադրի հրաժարվելը՝ ռիսկի աստիճանի փոփոխման ամսաթվից հիմք է հանդիսանում Ապահովագրության պայմանագրի դադարեցման համար: Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին գրավոր ծանուցում ուղարկել Պայմանագրի դադարեցման մասին: Ապահովագրողը պարտավոր չէ հատուցել ռիսկի աստիճանի ավելացման արդյունքում առաջացած կամ ավելացած վնասները, եթե Ապահովագրողը

8.2.6. When notifying about the circumstances leading to the increase in the degree of risk, the Insurer has the right to demand from the Insured to change the provisions of the Contract, payment of additional insurance premium or termination of the Contract. Refusal of the Insured to pay an additional insurance premium or change the terms of the Contract is the basis for termination of the Contract from the date of change in the degree of risk. The Insurer is obliged to send a written notice of termination of the Contract to the Insured. The Insurer is not obliged to compensate for the damages caused or increased as a result of the increase in the degree of risk, if the Insurer has not confirmed its agreement in writing, taking into account the mentioned increase in the degree of risk,

գրավոր չի հաստատել իր համաձայնությունը՝ հաշվի առնելով ռիսկի աստիճանի նշված ավելացումը,	
8.2.7. 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին շինմոնտաժային աշխատանքների մասնակի կամ ամբողջական դադարեցման մասին:	8.2.7. Inform the Insurer in writing about the partial or complete termination of construction works within 3 (three) working days from the date of such termination.
8.2.8. Ապահովադիրը պարտավոր է՝ ➢ իրականացնել ապահովագրված գույքի պահպանությունը ապահովագրության դիմումի մեջ նշված կարգին համապատասխան, ➢ ապահովել պահպանության և հակահրդեհային անվտանգության հայտարարված միջոցների առկայությունը, սարքինությունը և աշխատունակությունը:	8.2.8. The Insured is obliged to: ➢ protect the insurance property in accordance with the procedure prescribed by the application for insurance, ➢ ensure the availability, serviceability, and operability of the declared measures of protection and fire protection.
8.2.9. Ապահովադրի կողմից սույն Կանոնների 8.2.4, 8.2.5, 8.2.8 կետերում նշված պարտականությունները չկատարելու դեպքում, եթե դա հանգեցրել է այնպիսի իրադարձության, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու պահանջ ներկայացնելու համար և/կամ հանգեցրել է վնասի չափի ավելացմանը, տեղի ունեցած իրադարձությունը չի համարվում ապահովագրական պատահար, և Ապահովադրի վնասները ենթակա չեն հատուցման Ապահովագրողի կողմից:	8.2.9. In case of non-fulfillment by the Insured of the obligations prescribed by clauses 8.2.4, 8.2.5, 8.2.8 of the Rules that led to the occurrence of an event that can serve as a basis for the filing of a claim for payment of insurance compensation to the Insurer and/or led to an increase in the amount of damage, the event is not recognized as an insurance accident, and the losses of the Insured are not subject to compensation by the Insurer.
8.3. Այնպիսի իրադարձության տեղի ունենալու դեպքում, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին Ապահովագրության պայմանագրի «Նյութական վնաս» բաժնով ապահովագրական հատուցում վճարելու պահանջի ներկայացման համար՝ Ապահովադիրը պարտավոր է՝	8.3. If an event occurs that may serve as a basis for the filing of a claims for payment of insurance compensation to the Insurer under the section "Material damage", the Insured is obliged to:
8.3.1. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և հասանելի միջոցները ստեղծված իրավիճակում վնասները	8.3.1. Take all the necessary and accessible measures in the current situation to prevent or

կանխելու կամ նվազեցնելու համար: Նման միջոցներ ձեռնարկելիս Ապահովադիրը պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին, եթե նման ցուցումներ նրան տրվել են:

reduce the damage. When taking such measures, the Insured must follow the instructions of the Insurer, if such instructions were given.

8.3.2. Տեղեկացնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում՝ էլ. փոստի միջոցով, փոստի, ֆաքսի, հեռագրի, հեռախոսի կամ ուղղակիորեն, նշելով իրեն բոլոր հայտնի տեղեկությունները վնասի բնույթի և չափի մասին: Սույն պարտականությունը կհամարվի Ապահովադրի կողմից կատարված պատշաճ, եթե ծանուցումն արվել է ՝ հաշվի առնելով Ապահովագրողի փոստային վավերապայմանները, ինչպես նաև Ապահովագրողի կառուցվածքային ստորաբաժանման անվանումն ու ֆաքսի համարը, որին անհրաժեշտ է դիմել ապահովագրական պատահարի առաջացման դեպքում՝ Ապահովագրության պայմանագրում նշված տեղեկատվության համաձայն: Տվյալ պարտավորության պատշաճ կատարման փաստը, վեճի առաջացման դեպքում, պետք է հաստատվի գրավոր ապացույցով (անդորրագրով, գրությամբ և այլն):

8.3.2. Notify the Insurer within 24 hours, not counting weekends and holidays, by e-mail, fax, telegraph, telephone or directly, indicating all known information about the nature and amount of the loss. This obligation will be deemed to have been duly performed by the Insured if the notification is made considering the postal details of the Insurer, as well as the name and fax number of structural subdivision of the Insurer that must be contacted in the event of occurrence of insurance accident, according to the information specified in the Contract. The fact of proper performance of this obligation, in the event of a dispute, must be confirmed by written evidence (receipt, bill, etc.).

8.3.3. Չսպասելով Ապահովագրողի ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների կամ այլ իրավասու մարմինների ներկայացուցիչների ապահովագրական պատահարի վայր ժամանմանը՝ հավաքել հասանելի նախնական տեղեկատվություն վնասի առաջացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ (օրինակ՝ կազմել ապահովագրական պատահարի ականատեսների (վկաների) մասնակցությամբ կամայական ձևաթղթի ակտ, հնարավորության դեպքում ֆիքսել վնասի պատկերը լուսանկարով կամ տեսանկարահանմամբ) և հանձնել Ապահովագրողին:

8.3.3. Without waiting for the arrival of the Insurer's representatives, police employees or representatives of other competent authorities at the place of the insurance accident, gather available preliminary information regarding the causes and circumstances of the loss (for example, draw up an act of any form with the participation of eyewitnesses (witnesses) of the insurance accident, if possible, capture the picture of the damage with the help of photo or video recording) and transfer it to the Insurer.

8.3.4. Պահպանել վնասված օբյեկտը անփոփոխ վիճակում՝ մինչև նրա զննումը Ապահովագրողի

8.3.4. Keep the damaged object unchanged until it is inspected by the representatives of the Insurer.

ներկայացուցիչների կողմից: Ապահովադիրն իրավունք ունի փոփոխել վնասի պատկերը, եթե դա թելադրված է անվտանգության նկատառումներով կամ անհրաժեշտ է վնասի չափը նվազեցնելու համար, կամ եթե դրա համար ստացվել է Ապահովագրողի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև տեղի ունեցած իրադարձության մասին Ապահովագրողին գրավոր ծանուցելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում, պայմանով, որ Ապահովագրողից այլ առաջարկություններ չեն ստացվել:

The Insured has the right to change the damage scene if it is mandated by safety considerations or is necessary to reduce the damage amount or if the Insurer's written consent is received, as well as after 7 working days after the written notification to the Insurer about the accident was sent, provided that the Insurer did not make other recommendations.

8.3.5. Հայտնել նույն ժամկետում, ինչ և Ապահովագրողին, տեղի ունեցած իրադարձության մասին համապատասխան պետական պատկան մարմիններին:

8.3.5. To inform the appropriate government bodies about the occurred event in the same period as to the Insurer.

8.3.6. Ներկայացնել վնասված օբյեկտը Ապահովագրողի ներկայացուցչին կամ փորձագետին զննելու համար՝ նախքան վերանորոգման կամ վերականգնողական աշխատանքներ կատարելը: Ապահովագրական պատահարի առաջացման մասին Ապահովագրողին իրազեկող Ապահովադիրն իրավունք ունի մինչև Ապահովագրողի կողմից զննություն անցկացնելը կատարել փոքր վնասների (օբյեկտի ընդհանուր նախահաշվային արժեքի մինչև 5%-ը) վերականգնում, որոնք հասցվել են ապահովագրված օբյեկտին:

8.3.6. Submit the damaged object for the inspection to the representative or expert of the Insurer before the repairment or restoration works commence. The Insured who notified the Insurer of the occurrence of the insurance accident has the right to make small repairments (up to 5% of the total estimated cost of the object) to the damaged property prior to the inspection by the Insurer.

8.3.7. Ներկայացնել բոլոր այն տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին ապահովագրական պատահարի փաստի և պատճառի հաստատման, պատճառված վնասի գնահատման, Ապահովադրի/Շահառուի գույքային շահերի հաստատման համար, ներառյալ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

8.3.7. Submit to the Insurer all the necessary information and documents for establishing the fact and causes of the insurance accident, assessment of the damage caused, confirmation of property interests of the Insured/Beneficiary, including information constituting a trade secret.

8.3.8. Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից

8.3.8. Transfer all documents to the Insurer and take all measures necessary for the implementation by the Insurer the right of claim

պատճառված վնասի համար պատասխանատու անձանց նկատմամբ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի իրականացման համար:

8.3.9. Առանց Ապահովագրողի գրավոր հաստատման վնաս պատճառողի հետ չկնքել համաձայնագրեր, հաշտություններ կամ պատճառված վնասի վերականգնման հետ կապված պայմանագրեր:

8.3.10. Կատարել այլ գործողություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կանոններով և Ապահովագրության պայմանագրով:

8.3.11. Ներկայացնել Ապահովագրողին սահմանված ձևի գրավոր դիմում ապահովագրական հատուցում վճարելու համար՝ նշելով հայտ ներկայացնելու ամսաթվի դրությամբ վնասի առաջացման իրեն հայտնի հանգամանքները և դրա ենթադրվող չափը:

8.3.12. Ի հաստատումն վնասների առաջացման պատճառի և Ապահովագրողի կողմից Ապահովադրի հայտարարված վնասն ապահովագրական պատահար ճանաչելու համար Ապահովադիրը պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերի պատճենները, իսկ սույն Կանոններով հատուկ սահմանված դեպքերում՝ փաստաթղթերի բնօրինակները: Փաստաթղթերի պատճենները պետք է վավերացվեն Ապահովադրի կողմից (լիազորված անձի ստորագրությամբ, կազմակերպության կնիքով): Այն դեպքում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է Ապահովագրության պայմանագրով, փաստաթղթերը կարող են տրամադրվել Շահառուի կողմից սկանավորված տեսքով և վավերացվել Ապահովագրողի կնիքով և Ապահովագրողի լիազորված պաշտոնատար անձի ստորագրությամբ:

(subrogation) to persons responsible for the caused damage.

8.3.9. Without the Insurer's written confirmation, do not sign agreements, reconciliations, or contracts for the recovery of damages with the persons responsible for the caused damage.

8.3.10. Perform other actions provided by the legislation of the Republic of Armenia, the Rules, and the Contract.

8.3.11. Submit to the Insurer a written application of the established form for the payment of insurance compensation with indication of circumstances known to the Insured on the date of filing the application for the occurrence of the loss and its estimated amount.

8.3.12. In confirmation of the reason for the occurrence of losses and for the recognition of the claimed loss by the Insurer to be the insurance compensation, the Insured must submit copies of necessary documents, and in a special case original documents stipulated by the Rules. Copies of the documents must be certified by the Insured (signature of the authorized person, seal of the organization). If it's directly provided by the Contract, the documents can be provided by the Beneficiary in the form of a scanned image and certified by the seal of the Insurer and the signature of the authorized official of the Insurer. The Contract or a separate agreement of the Parties may provide that for all, or some events determined by the agreement of the Parties, the Insurer has the right to make the decision on insurance compensation and on the implementation of insurance payments based on electronic (scanned) copies of documents listed in

Ապահովագրության պայմանագրով կամ կողմերի առանձին համաձայնությամբ կարող է նախատեսվել, որ բոլոր կամ կողմերի համաձայնությամբ որոշված իրադարձություններով Ապահովագրողն իրավունք ունի որոշում ընդունել իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու և ապահովագրական հատուցումն իրականացնելու մասին սույն Կանոններում նշված փաստաթղթերի էլեկտրոնային (սկանավորված) պատճենների հիման վրա, որոնք Շահառուն ուղարկել է Ապահովագրողի էլեկտրոնային հասցեին, որը նշված է Ապահովագրության պայմանագրում: Ընդ որում, Ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում Շահառուից պահանջել (այդ թվում՝ ծանոթանալու համար) էլեկտրոնային (սկանավորված) պատճենների տեսքով իրեն ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

the Rules sent by the Beneficiary to the electronic mailbox of the Insurer specified in the Contract. Meanwhile, the Insurer reserves the right to request from the Beneficiary (including - for familiarization) originals of documents submitted to him in the form of electronic (scanned) copies.

8.3.13. Տրամադրել իր կրած վնասների չափը հիմնավորող և հաստատող փաստաթղթեր, որոնց հիման վրա կատարվելու է ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից: Փաստաթղթերի պատճենները պետք է վավերացվեն Ապահովադրի կողմից (լիազորված անձի ստորագրությամբ, կազմակերպության կնիքով): Նման փաստաթղթեր են.

- վնասված, ոչնչացված և/կամ կորցրած գույքի ցանկ,
- մասնագիտացված կազմակերպության տեխնիկական եզրակացությունը վնասված/ոչնչացված գույքի վիճակի մասին,
- դեֆեկտային տեղեկագիր,
- ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին վնասված, ոչնչացված և (կամ) կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթեր,

8.3.13. Provide documents justifying and confirming their losses, based on which the amount of insurance compensation will be calculated depending on the nature of the insurance accident. Copies of documents must be verified by the Insured (signature of the authorized person, seal of the organization). Such documents are:

- a list of damaged, destroyed and/or lost property,
- technical conclusion of a specialized organization on the condition of the damaged/destroyed property,
- deficiencies list,
- documents confirming the value of damaged, destroyed and (or) lost property

- գույքի գույքագրման ակտեր (գույքագրման ցանկ), որոնք կազմվել են Ապահովագրական պատահարի առաջացման ամսաթվին ամենամոտ ամսաթվի դրությամբ և կազմվել են գույքի վնասման (ոչնչացման) փաստով,
- վերանորոգման և վերականգնողական աշխատանքների կատարման արժեքը հաստատող փաստաթղթեր՝

ա) նորոգման-վերականգնողական աշխատանքների կատարման պայմանագրերը,
բ) վերանորոգման-վերականգնողական աշխատանքների կատարման նախահաշիվները (հաշվարկները),
գ) հաշիվներ, հաշիվ-ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ,
դ) կատարված աշխատանքների ակտերը, կատարված աշխատանքների արժեքի վերաբերյալ տեղեկանքները,

- վերանորոգման և վերականգնողական աշխատանքների կատարման համար ձեռք բերված նյութերի/սարքավորումների արժեքը հաստատող փաստաթղթեր՝

ա) առքուվաճառքի, մատակարարման պայմանագրերը,
բ) հաշիվ-ապրանքագրեր, ինվոյսներ,
գ) ապրանքագրեր,

- կատարված վերականգնողական աշխատանքների վճարումը հաստատող, նյութերի և սարքավորումների գնման փաստաթղթեր:

Ապահովագրողն իրավունք ունի կրճատել պահանջվող փաստաթղթերի ցանկը՝ կախված ապահովագրական պատահարի կոնկրետ հանգամանքներից:

8.3.14. Հաստատել իր շահը (օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա) ապահովագրված գույքի պահպանման

at the time of occurrence of the insurance accident,

- property inventory reports (inventory lists) drawn up on the date nearest to the date of occurrence of the insurance accident, and drawn up on the fact of damage (destruction) of property,

- documents confirming the cost of repairment and restoration works:

a) contracts for repairment and restoration works,
b) estimates (calculations) for repairment and restoration works,

c) accounts, invoices, payment orders,

d) acts of works performed, certificates of the cost of works performed,

- documents confirming the cost of purchased materials/equipments for repairment and restoration works:

a) sales and purchase agreements, delivery agreements,
b) bills, invoices,
c) consignment notes,

- documents confirming the payment for the restoration of the works performed and the purchase of materials and equipments.

The Insurer has the right to reduce the list of required documents depending on the specific circumstances of the insurance accident.

8.3.14. Confirm their interest (based on a law, other legal act, or contract) in preservation of the insurance property in accordance with the

նկատմամբ համաձայն ՀՀ օրենսդրության, նախքան Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման համար ներկայացված պահանջի ուսումնասիրումը: Դրա համար անհրաժեշտ է տրամադրել ապահովագրված գույքի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթեր, մասնավորապես՝

ա) ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ՝

- շինարարության թույլտվություն,
- շինարարական կապալի պայմանագիր,

բ) ապահովագրված այլ գույքի նկատմամբ հետևյալ փաստաթղթերի պատճենները՝

- օպերատիվ կառավարման պայմանագիր՝ բոլոր հավելվածներով,
- վարձակալության պայմանագիր՝ բոլոր հավելվածներով,
- ապահովագրության օբյեկտի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական,
- շենքի, տարածքի, շինության, տնտեսական կառույցի տեխնիկական անձնագիր՝ հարկային պլանների հավելվածով, էքսպլիկացիայով,
- առքուվաճառքի, մատակարարման և այլն պայմանագիր, ինչպես նաև ապրանքագիր, հաշիվ-ապրանքագրեր, մասնագրեր, վճարման փաստաթղթեր, ինվոյսներ պայմանագրերի նկատմամբ,
- հիմնական միջոցների հաշվառման գույքագրման քարտերը և/կամ ապահովագրված գույքի նկատմամբ Ապահովադրի շահը հաստատող նմանատիպ փաստաթղթերը:

Եթե ապահովագրված գույքը հանդիսանում է գրավի առարկա, ապա անհրաժեշտ է ներկայացնել վարկային պայմանագիրը և գրավի

legislation of RA before the start of the review of claim application for the payment of insurance compensation by the Insurer. To do this, documents confirming the right of possession, use, disposal of the insured property must be submitted, namely:

a) in respect of insured construction and installation works:

- building permit,
- construction contract,

b) in respect of other insurance properties, copies of the following documents:

- operational management policy with all annexes,
- lease agreement with all annexes,
- certificate of state registration of the right to the object of insurance,
- technical passport of BTI for building, premises, construction, outbuilding with application of floor plans, explication,
- sales and purchase, delivery and other agreements, as well as consignment notes, invoices, specification notes, payment documents, invoices of the policies,
- inventory cards of fixed assets and / or similar documents confirming the interest of the Insured in the insurance property.

If the insurance property is subject to collateral, it is necessary to submit a credit agreement and pledge agreement with all annexes, certificate of debt under the loan agreement.

պայմանագիրը բոլոր հավելվածներով, վարկային պայմանագրի վերաբերյալ տեղեկանք: Փաստաթղթերի պատճենները պետք է վավերացվեն Ապահովադրի կողմից (լիազորված անձի ստորագրությունը, կազմակերպության կնիքը):	Copies of documents must be certified by the Insured (signature of the authorized person, seal organizations).
8.4. Ապահովագրական հատուցման դիմումի և 8.3.11 - 8.3.14 կետերում նշված այլ փաստաթղթերի Ապահովագրողի կողմից ստանալու փաստը պետք է հաստատվի Ապահովագրողի լիազոր ներկայացուցչի ստորագրությամբ կամ փոստային գերատեսչության անդորրագրով. Ապահովագրողի հասցեին ուղարկված նամակի անդորրագիր: Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատելու և վնասի չափը որոշելու համար Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրողին ներկայացնել սույն Կանոններով չնախատեսված ցանկացած այլ լրացուցիչ փաստաթղթեր, իսկ Ապահովագրողը պարտավոր է ուսումնասիրել այդ փաստաթղթերը:	8.4. The fact that the Insurer received an application for payment of insurance compensation and other documents, specified in clauses 8.3.11 – 8.3.14 of the Rules, must be confirmed by the receipt of the authorized representative of the Insurer, or a receipt of the postal department on sending a valuable letter with inventory attachments to the Insurer. To confirm the fact of occurrence of the insurance accident and determine the amount of damage the Insured has the right to submit to the Insurer any other additional documents that are not provided for by theRules, and the Insurer is obliged to consider these documents.
8.5. Ապահովագրողն իրավունք ունի՝	8.5. The Insurer has the right to:
8.5.1. Ստուգել ապահովագրված օբյեկտի վիճակը, ապահովագրության օբյեկտի մասին իրեն հաղորդած տեղեկությունների համապատասխանությունը իրականությանը, ինչպես նաև Ապահովադրի կողմից շինարարական նորմերի և կանոնների, անվտանգության տեխնիկայի կանոնների և Ապահովագրության պայմանագրի պայմանների և Ապահովագրողի գրավոր հանձնարարականների պահպանումը:	8.5.1. Check the condition of the insurance object, the compliance of the Insured’s information about the object of insurance to the reality, as well as compliance to the building codes and rules, safety rules and terms of the Contract and written recommendations of the Insurer by the Insured.
8.5.2. Մասնակցել շինարարության ավարտված օբյեկտների շահագործման ընդունման հանձնաժողովի աշխատանքներին:	8.5.2. Participate in the works of the commissioning completed construction objects into operation.
8.5.3. Մասնակցել ապահովագրված գույքի փրկմանը և պահպանմանը, տալ, Ապահովադրի	8.5.3. Participate in the rescue and preservation of the insurance property, give written

համար պարտադիր համարվող վնասի նվազեցման, գրավոր առաջարկներ:

8.5.4. Ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի պատճառներն ու հանգամանքները:

8.5.5. Ձեռնամուխ լինել վնասված գույքի զննմանը՝ չսպասելով վնասի մասին Ապահովադրի ծանուցմանը: Ապահովադիրն իրավունք չունի խոչընդոտելու Ապահովագրողին:

8.5.6. Ապահովադրից պահանջել տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի փաստի հաստատման և վնասի չափը որոշելու համար, ներառյալ՝ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

8.5.7. Պահանջել այն փաստաթղթերը, որոնք թույլ են տալիս պարզել ապահովագրական պատահարի առաջացման փաստը և պատճառը, պատճառված վնասի չափը և հաստատել Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը, եթե հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները, նման փաստաթղթերի բացակայությունն անհնարին է դարձնում ապահովագրական պատահարի փաստի, պատճառի որոշումը, ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի չափի և Ապահովադրի (Շահառուի) գույքային շահի որոշումը: Այդ դեպքում ապահովագրական հատուցման վճարման ժամկետը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից պահանջվող փաստաթղթերը վերջինիս տրամադրելու օրվանից: Դատարանում վեճի առաջացման դեպքում ապահովագրական պատահարի քննություն անցկացնելու համար պահանջվող փաստաթղթերի անհրաժեշտությունն ապացուցելու պարտականությունը կրում է Ապահովագրողը:

8.5.8. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառը հաստատող համապատասխան փաստաթղթեր և

recommendations for the reduction of damage, which are mandatory for the Insured.

8.5.4. Independently find out the causes and circumstances of the insurance accident.

8.5.5. Proceed to the inspection of the affected property, without waiting for the Insured's notification of damage. The Insured does not have the right to prevent the Insurer from doing so.

8.5.6. Demand from the Insured the information necessary to establish the fact of the insurance accident and determine the amount of damage, including information constituting a trade secret.

8.5.7. Require documents to establish the fact and cause of the occurrence of insurance accident, the amount of damage caused and confirm the property interest of the Insured (Beneficiary), if, considering the specific circumstances, the absence of such documents makes it is impossible to establish the fact, the cause of the insurance accident, the determination of the amount of the caused damage and property interest of the Insured (Beneficiary). Herein the term of payment of insurance compensation is counted from the date of provision of the last of documents requested by the Insurer. Duty to prove the necessity of the requested documents for the investigation of the insurance accident in the event of a dispute in court lies on the Insurer.

8.5.8. Send a request to the competent authorities for the submission of relevant documents and

տեղեկություններ ստանալու համար հարցում ուղարկել իրավասու մարմիններին:

8.5.9. Ապահովադրից պահանջվող բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետի ավելացման մասին և այդ մասին տեղեկացնել Ապահովադրին, եթե՝

8.5.9.1. Կատարվում է ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և հանգամանքների և վնասի չափի անկախ փորձաքննություն (սույն Կանոնների 9.3 - 9.4 կետ): Ընդ որում, ապահովագրական հատուցման վճարման ժամկետն ավելանում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում անցկացվելու է փորձաքննությունը:

8.5.9.2. Ապահովագրական պատահարի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ, կամ նախապատրաստվում են նյութեր: Այդ դեպքում Ապահովագրողը որոշում է կայացնում ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցում վճարելը մերժելու մասին սույն Կանոնների 8.6.4.2 կետում նշված ժամկետում քրեական հետապնդման մարմինների կամ դատարանի վերջնական որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

8.5.9.3. Առկա են հիմնավոր կասկածներ Ապահովադրի՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքների վերաբերյալ: Ընդ որում, ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, քանի դեռ չեն ներկայացվել անհրաժեշտ ապացույցները (սույն Կանոնների 8.3.14 կետում նշված փաստաթղթերը):

8.6. Ապահովագրողը պարտավոր է՝

8.6.1. Ապահովադրին ծանոթացնել սույն Կանոնների պայմաններին:

8.6.2. Ռիսկի աստիճանի փոփոխման մասին հաղորդումն Ապահովադրից ստանալու դեպքում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում

information confirming the fact and cause of the insurance accident.

8.5.9. After receiving all the requested documents from the Insured, decide whether to increase the term of payment of insurance indemnity within 3 (three) working days and notify about it the Insured, if:

8.5.9.1. Independent examination of the causes, circumstances and the amount of damage of the insurance accident is carried out (clauses 9.3 - 9.4 of the Rules). Meanwhile, the term of payment of insurance compensation is increased by the period during which the examination is carried out.

8.5.9.2. On the fact of the insurance accident, a criminal case was initiated or materials are being prepared. In this case, the Insurer decides on the payment of the insurance indemnity or refusal to do so within the period specified in clause 8.6.4.2 of the Rules, starting from the date of completion of the criminal investigation or the date of entry into force of the final court decision.

8.5.9.3. There are reasonable doubts about the eligibility of the Insured to receive insurance compensation. Meanwhile, the insurance compensation is not paid until necessary evidence is presented (documents specified in clause 8.3.14 of the Rules).

8.6. The Insurer is obliged to:

8.6.1. Familiarize the Insured with the terms of the Rules.

8.6.2. Within 5 (five) working days upon the receipt of a message from the Insured about the change in the degree of risk, consider it and

ուսումնասիրել այն և Ապահովադրին գրավոր տեղեկացնել Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխության և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարման կամ պայմանագրի դադարեցման մասին (սույն Կանոնների 8.2.5 կետ):

inform the Insured in writing about the change in the terms of the Contract and/or payment of an additional insurance premium or termination of the Contract (clause 8.2.5 of the Rules).

8.6.3. Չհրապարակել Ապահովադրի և նրա գույքային վիճակի մասին տեղեկություններ, բացառությամբ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.6.3. Not to disclose information about the Insured and his property status, except cases stipulated by the current legislation.

8.6.4. Վնասի մասին Ապահովադրից գրավոր ծանուցում ստանալուց հետո (սույն Կանոնների 8.3.2 կետ)՝

8.6.4. After receiving a written notice of damage from the Insured (clause 8.3.2 of the Rules):

8.6.4.1. Անհրաժեշտության դեպքում, Ապահովադրի մասնակցությամբ, պատահարի մասին ծանուցման պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում կատարել ապահովագրության օբյեկտի զննում և կազմել զննության ակտ: Վնասված գույքի զննումը Կողմերի կողմից կարող է համաձայնեցվել՝

8.6.4.1. If necessary, with the participation of the Insured within 7 (seven) working days from the date of notification of the insurance accident organize an inspection of the object of insurance and draw up an inspection report. Inspection of the damaged property may be conducted by the Parties by:

- Ապահովագրողի ձևաթղթով համաձայնագրի ստորագրումով,
- signing an agreement using the form provided by the Insurer,
- զննության ժամանակի վերաբերյալ առաջարկների պատվիրված նամակով (առնվազն ընտրության երկու տարբերակով),
- registered mail of the inspection time (at least two options to choose from),
- համաձայնեցման փաստը հաստատող այլ եղանակով: Եթե վնասված գույքը տրամադրվում է Ապահովագրողի կամ նրա փորձագետի գտնվելու վայրում, ապա պետք է կատարվեն բացառություններ այն գույքի համար, որի տեղափոխումը դժվար է (այդ գույքի զննումը պետք է իրականացվի դրա գտնվելու վայրում): Եթե գույքը տրամադրված չէ զննման (ստուգման) համար, ապա համաձայնեցվում է զննման երկրորդ օրը և վայրը՝ հատուցման ժամկետը կասեցնելու հետ մեկտեղ: Զննման (ստուգման) համար
- another way confirming the fact of agreement. If the damaged property is provided at the location of the Insurer or its expert, exceptions should be made for property which movement is difficult (inspection of such property must be held at its location). If the property is not provided for inspection (examination), then the second date and place of inspection are agreed on with suspension of compensation payment period. In case of the failure to provide property for second inspection (examination) the Insurer

գույքը երկրորդ անգամ չներկայացնելու դեպքում Ապահովագրողն առանց ուսումնասիրության վերադարձնում է այդ անձի կողմից ներկայացված ապահովագրական հատուցման դիմումը, ինչպես նաև դրան կից փաստաթղթերը:

returns the application for insurance compensation submitted by such a person, and documents attached to it without consideration.

8.6.4.2. Ապահովադրից ապահովագրական հատուցում վճարելու դիմում ստանալուց և 8.3 կետում նշված այլ պարտականությունները կատարելուց հետո՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրված գույքի ոչնչացման (կորստի) կամ վնասման պատճառների ուսումնասիրություն, որոշել վնասի չափը և ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը ճանաչելու դեպքում կազմել ապահովագրական ակտ և վճարել ապահովագրական հատուցում կամ նույն ժամկետում Ապահովադրին գրավոր տեղեկացնել ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ նշելով մերժման պատճառները: Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:

8.6.4.2. Within 15 (fifteen) working days after receiving the application from the Insured on payment of insurance compensation and performance of other obligations specified in clause 8.3, investigate the causes and circumstances of destruction (loss) or damage to the insurance property, determine the amount of loss and, upon recognition of the fact of occurrence of the insurance accident, make an insurance act and pay insurance indemnity or send a written notification to the Insured of refusal of the payment of insurance compensation with a justification of the reasons for refusal in the same time period.
The day of payment of insurance compensation is the date of debiting funds from the current account of the Insurer.

ԳԼՈՒԽ 9: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

CHAPTER 9: DETERMINATION OF THE AMOUNT AND PROCEDURE FOR PAYMENT OF INSURANCE COMPENSATION

9.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրին (Շահառուին) պայմանագրով սահմանված ապահովագրական գումարների և պատասխանատվության սահմանաչափերի սահմաններում՝ մասհանելով պայմանագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը, վնասի հատուցման համար Ապահովադրի գրավոր դիմումի, վնասված գույքի նկատմամբ գույքային շահի առկայությունը,

9.1. Insurance compensation is paid to the Insured (Beneficiary) based on a written application of the Insured for compensation of damages, documents confirming the existence of a property interest in the damaged property, the fact and cause of the insurance accidents and the amount of damage within the sum insureds established in the Contract and the limits of liability minus the established non-conditional deductible amount.

ապահովագրական պատահարի առաջացման փաստը, պատճառը և վնասի չափը հաստատող փաստաթղթերի հիման վրա:

9.2. Ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրված օբյեկտներին (այսուհետ՝ ապահովագրված գույքին) պատճառված վնասի չափը չգերազանցող գումարի չափով: Ապահովադրին ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Ապահովադրի հաշվարկային հաշվին դրամական միջոցների անկանխիկ փոխանցման միջոցով՝ համաձայն ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ՀՀ սահմանված հաշվարկների իրականացման կանոնների: Եթե վնասի չափը որոշվում է արտարժույթով, ապա ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի տվյալ արժույթի համար սահմանված պաշտոնական փոխարժեքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Արտարժույթով արտահայտված սահմանաչափերը (ենթասահմանաչափերը) և Չհատուցվող գումարները սահմանվում են ՀՀ դրամի փոխարժեքով: Ապահովագրական հատուցման չափը որոշվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի տվյալ արժույթի համար սահմանված պաշտոնական փոխարժեքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է մասհանելով ապահովագրավճարի չվճարված մասը այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով կամ Ապահովագրության պայմանագրով:

9.2. Insurance compensation is paid in the amount not exceeding the damage caused to the insurance objects (hereinafter referred to as the section - insurance property). Payment of insurance compensation to the Insured is made by non-cash transfer of funds to the settlement account of the Insured in accordance with the settlement rules established in the Republic of Armenia on the insurance compensation's payment day. If the amount of damage is denoted in a foreign currency, the payment of insurance compensation is made at the official rate of that currency, established by the Central Bank of the Armenia on the date of the insurance accident, unless otherwise provided by the Contract. Limits (sublimit) and deductibles denoted in foreign currencies are established in equivalent dram amounts. The amount of insurance compensation is also calculated based on the official exchange rate of that currency, established by the Central Bank of Armenia on the date of occurrence of the insurance accident, unless otherwise provided by the Contract. The insurance compensation payment is calculated by subtracting the unpaid part of the insurance premium in those cases, when it is provided by law or the Contract.

9.3. Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից կատարված փորձաքննության արդյունքների հիման վրա և/կամ վերանորոգման

9.3. The amount of damage is determined by the Insurer based on the results of the examination, and/or the documents confirming the cost of repairment work.

աշխատանքների կատարման ծախսերի արժեքը հաստատող փաստաթղթերի հիման վրա:	
9.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ներգրավել անկախ փորձագիտական կազմակերպություն՝ Ապահովադրի կրած վնասների չափը գնահատելու կամ վնասի առաջացման պատճառները որոշելու համար: Ապահովագրական պայմանագրի կողմը, որը ներգրավել է անկախ փորձագիտական կազմակերպություն, կրում է վերջինիս ծառայությունների վճարման ծախսերը:	9.4. Any of the Parties has the right to involve an independent expert organization to determine the causes of the damage or assessment of the amount of losses incurred by the Insured. The Party of the Contract that has attracted an independent expert organization shall bear the costs for its services.
9.5. Վնասի չափը որոշվում է՝	9.5. The amount of damage is determined by:
9.5.1. Լրիվ ոչնչացման դեպքում՝ ապահովագրական պատահարի պահին նրա իրական արժեքի չափով՝ մասհանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործառնական նշանակությամբ: Լրիվ ոչնչացում ասելով հասկանում ենք ապահովագրված գույքի այնպիսի վիճակը, երբ բացակայում է դրա վերականգնման տեխնիկական հնարավորությունը, կամ երբ վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են դրա իրական արժեքը ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին:	9.5.1. In case of complete destruction of the insurance property - in the amount of its actual value at the time of the insurance accident minus the value of the balances that can be sold or used for operational purposes. Complete destruction refers to the state whereby there is no technical possibility of the restoration of insurance property or when the necessary recovery costs exceed its actual value at the time of occurrence of the insurance accident.
9.5.2. Ապահովագրված գույքի վնասման դեպքում՝ ➢ վերականգնողական ծախսերի գումարի չափով այն վիճակին բերելու համար, որում այն գտնվում էր ապահովագրական պատահարի տեղի ունենալուց անմիջապես առաջ, բայց ոչ ավելի, քան Պայմանագրում նշված ապահովագրական գումարները:	9.5.2. In case of damage to the insurance property: ➢ in the amount of costs for its restoration up to the state in which it was immediately before the occurrence of the insurance accident, but not more than specified in the Contract.
Վերականգնողական ծախսերը ներառում են՝ ➢ վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի գնման ծախսերը,	Restoration costs include: ➢ expenses for the purchase of materials necessary for repairs,

- վերանորոգման վայր նյութերի առաքման ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների վարձատրման ծախսերը, բացառությամբ արտաժամյա, գիշերային ժամերին և պաշտոնական տոներին կատարված աշխատանքի աշխատավարձի հավելավճարների, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, աշխատանքների կատարման հրատապության, շինանյութերի փոխադրման եղանակի փոփոխման, ապահովագրված օբյեկտի պլանավորման կատարելագործման կամ փոփոխման, ժամանակավոր կամ պրոֆիլակտիկ վերանորոգման իրականացման հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև վերանախագծման և (կամ) լրացուցիչ նախագծման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ առանձին կոնստրուկցիաների և (կամ) շենքի ամրացման նախագծերի մշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, ապահովագրական հատուցման գումարի մեջ չեն ներառվում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

- costs of delivery of materials to the place of repair,
- expenses for payment of repairment works except surcharges to the salary for overtime, night, and public holiday work, unless otherwise provided in the Contract. At the same time, additional costs caused by the urgency of the work, changing the method of transportation of building materials, improvement or change of layout of the insurance object, the temporary or preventive repairs, as well as expenses, related to redesign and/or additional design, including those caused by the need to develop projects for strengthening individual structures and / or the building as a whole, are not included in the amount of insurance compensation, unless otherwise provided in the Contract.

9.5.2.1. Ապահովագրված գույքի վերականգնման ծախսերը որոշվում են մասհանելով վերականգնման (վերանորոգման) ընթացքում փոխարինվող նյութերի և պահեստամասերի մաշվածության արժեքը: Եթե կատարվում է վնասված մասերի փոխարինում, չնայած այն բանին, որ հնարավոր է եղել դրանց վերանորոգումը առանց ապահովագրված գույքի շահագործման անվտանգության սպառնալիքի, ապա Ապահովագրողը հատուցում է

9.5.2.1. Expenses for restoration of the insurance property are determined by removing the cost of wear and tear of materials and spare parts replaced in the process of restoration (repairment). If the damaged parts are being replaced, even though it was possible to repair them without threats to the safety, the Insurer reimburses the Insured the cost of repairing these parts, but not higher than the cost of replacing them.

Ապահովադրին այդ մասերի վերանորոգման արժեքը, բայց ոչ ավելի, քան դրանց փոխարինման արժեքը:

9.5.3. Ապահովագրված գույքի առևանգման դեպքում՝ ապահովագրական պատահարի պահին նրա ապահովագրական (իրական) արժեքի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրում նշված ապահովագրական գումարը:

9.5.3. In case of theft of the insurance property, in the amount of its insurance (valid) value at the time of the insurance accident, but not more than the sum insured specified in the Contract.

9.6. Ապահովագրողը նաև փոխհատուցում է հատուցման ենթակա վնասները (փրկության ծախսերը) նվազեցնելու նպատակով Ապահովադրի կատարած ողջամիտ և նպատակահարմար ծախսերը, եթե նման ծախսերն անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումով, նույնիսկ ձեռնարկված միջոցների անարդյունք լինելու ժամանակ: Նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ՝ անկախ այն հանգամանքից, որ հատուցման ընդհանուր գումարը կարող է գերազանցել ապահովագրական գումարը:

9.6. The Insurer also compensates any reasonable and suitable expenses incurred by the Insured to reduce losses subject to compensation by the Insurer (expenses for rescue), if such expenses were necessary or were made at with Insurer's directions, even if they were unsuccessful. These expenses are reimbursed in proportion to the ratio of the sum insured to the insurance value even if the total amount of compensation exceeds the sum insured.

9.7. Այն դեպքում, եթե դա նախատեսված է Ապահովագրության պայմանագրի պայմաններով, Ապահովագրողը հատուցում է ապահովագրական պատահարից հետո տարածքի մաքրման ծախսերը Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարների (սահմանաչափերի) սահմաններում: Մաքրման ծախսեր են համարվում այն ծախսերը, որոնք պետք է իրականացվեն ապահովագրական պատահարից հետո՝ շինհրապարակի տարածքը վերականգնման աշխատանքների համար պիտանի վիճակի բերելու համար: Սույն կետում նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի ապահովագրական գումարի նկատմամբ համամասնությամբ: Եթե

9.7. If it is provided by the terms of the Contract, the Insurer reimburses expenses within the sums insured (limits) for clearing the territory after the insurance accident. Clearance costs are the costs to be incurred after insurance accident to bring the territory of the construction site to a state suitable for carrying out restoration work. The expenses specified in this paragraph shall be reimbursed in proportion with the ratio of the sum insured to the insurance value. If, because of a natural disaster, the place of loss was moved beyond the insurance area, then only those clearance costs that relate to the insurance property on insurance area are reimbursed.

տարերային աղետի հետևանքով վնասի վայրը դուրս է գալիս ապահովագրության տարածքից, ապա հատուցվում են միայն այն մաքրման ծախսերը, որոնք վերաբերում են ապահովագրության տարածքում ապահովագրված գույքին:	
9.8. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի վերացման՝ այլ ողջամիտ և նպատակահարմար ծախսերի փոխհատուցում:	9.8. The Contract may provide compensation for other reasonable and expedient expenses for elimination the damage caused by the insurance accident.
9.9. Գույքի վերականգնման ծախսերը չեն ներառում.	9.9. The property restoration expenses does not include:
9.9.1. Ապահովագրված գույքի փոփոխությունների և/կամ բարելավման հետ կապված ծախսերը,	9.9.1. Expenses related to changes and/or improvements of the insurance property,
9.9.2. Ժամանակավոր (օժանդակ) վերանորոգման կամ վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը, եթե այդ վերանորոգումը լրիվ վերանորոգման մաս չէ, և ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,	9.9.2. Expenses for temporary (auxiliary) repairment or restoration works if the repair is not a part of a complete repair, unless otherwise provided by the Contract,
9.9.3. Սարքավորումների պլանային կամ պրոֆիլակտիկ նորոգման, տեխնիկական սպասարկման ծախսերը:	9.9.3. Expenses for scheduled or preventive repairments, maintenance of equipment.
9.10. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը, եթե Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը՝	9.10. The Insurer has the right to deny the payment of the insurance compensation if the Insured or their representative:
9.10.1. Դիտավորությամբ կատարել կամ թույլ է տվել այնպիսի գործողություններ (անգործություն), որոնք հանգեցրել են վնասի առաջացմանը:	9.10.1. Intentionally committed or allowed actions (inactions) that led to the occurrence of the damage,
9.10.2. Ստացել է հատուցում վնաս պատճառած անձից: Եթե Ապահովադիրը պատճառված վնասի համար հատուցում է ստացել այն պատճառելու համար մեղավոր երրորդ անձանցից, ապա Ապահովագրողն Ապահովադրին վճարում է միայն Ապահովագրության պայմանագրի պայմաններով վճարման ենթակա գումարի և	9.10.2. Received compensation for damage from the person guilty or causing it. If the Insured has received compensation for damage from third parties guilty of its infliction, the Insurer pays to the Insured only the difference between the amount payable under the terms of the Contract and the amount, received by the Insured from said

երրորդ անձանցից Ապահովադրի ստացած գումարի տարբերության չափով: Ապահովադիրը պարտավոր է այդ գումարների ստացման մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

9.10.3. Գործող օրենսդրությամբ և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

9.11. Այն դեպքում, երբ Ապահովադիրը խոչընդոտել է Ապահովագրողին կամ նրա ներկայացուցիչներին ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալուց հետո ապահովագրված գույքի զննություն կատարելուն, տվյալ իրադարձության առաջացման հանգամանքների բացահայտմանը, վնասի բնույթը և չափը որոշելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

9.12. Եթե Ապահովադրին վերադարձվել է իրենից առևանգված ապահովագրված գույքը, ապա նա պարտավոր է 10 օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը՝ մասհանելով գույքի հափշտակման արդյունք դարձած անհրաժեշտ և կատարված վերականգնողական (վերանորոգման) աշխատանքների վճարման ծախսերը:

9.13. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը (կամ դրա համապատասխան մասը), եթե օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքում հայտնաբերվում է հանգամանք, որն Ապահովադրին ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկում է ապահովագրական հատուցման ստացման իրավունքից:

9.14. Ապահովագրողն ազատվում է այն վնասների հատուցումից, որոնք առաջացել են այն

third parties. The Insured is obliged to immediately notify The Insurer on the receipt of such amounts,

9.10.3. In other cases, stipulated by the current legislation and the Contract.

9.11. If the Insured prevented the Insurer or its representatives from examining the insurance property after the occurrence of an event that has signs of an insurance accident, identification of the circumstances of the occurrence of this event, determining the nature and amount of damage, the Insurer has the right to deny the payment of insurance compensation.

9.12. If the Insured was returned the stolen insurance property, they are obliged to return within 10 days to the Insurer the received insurance compensation minus the costs of payment for necessary and performed restoration (repair) works resulting from theft of property.

9.13. The Insured is obliged to return to the Insurer the paid insurance compensation (or its corresponding part), if within the statutory limitation period, a circumstance is discovered that fully or partially deprives the Insured of the right to receive insurance compensation.

9.14. The Insurer is exempt from compensation for losses if the Insured has intentionally failed to

բանի հետևանքով, որ Ապահովադիրը դիտավորությամբ չի ձեռնարկել ողջամիտ և նպատակահարմար միջոցներ՝ հնարավոր վնասները նվազեցնելու համար (սույն Կանոնների 8.3.1 կետի համաձայն):

9.15. Ապահովադրի կողմից 8.3.2 և 8.3.3 կետերում նախատեսված պարտականությունների չկատարումը Ապահովագրողին իրավունք է տալիս մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը:

9.16. Ապահովագրողը չի տրամադրում ծածկույթ և պատասխանատվություն չի կրում Պայմանագրի շրջանակներում վճարման կամ վնասի հատուցում տրամադրելու համար այն մասով, որով Ապահովագրողի նկատմամբ նման ծածկույթի տրամադրման կամ փոխհատուցման կամ նման վճարման իրականացման արդյունքում կկիրառվեն պատժամիջոցներ, արգելք կամ սահմանափակում՝ ՄԱԿ-ի բանաձևերին, Եվրոպական Միության, Մեծ Բրիտանիայի կամ ԱՄՆ-ի որևէ առևտրային կամ տնտեսական պատժամիջոցներին, օրենսդրությանը կամ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

take reasonable and affordable measures to mitigate possible losses (in accordance with paragraph 8.3.1. of the Rules).

9.15. Failure of the Insured to fulfill the obligations stipulated in clauses 8.3.2, 8.3.3 of the Rules gives the Insurer the right to deny the payment of insurance compensation.

9.16. The Insurer does not provide coverage and is not responsible for making payments or providing compensation for losses under the Contract in the case whereby because of the provision of such coverage or reimbursement sanctions, prohibitions or restrictions will be imposed on the Insurer in accordance with the resolutions of the United Nations, any trade or economic sanctions, legislations or regulations of the European Union, Great Britain or the United States.

ԳԼՈՒԽ 10: ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

10.1. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարած, հատուցված գումարի սահմաններում, անցնում է պահանջի իրավունքը, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում պատասխանատու անձի նկատմամբ՝ հատուցված վնասի համար:

Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, գրավոր հայտնել իրեն հայտնի ամբողջ

CHAPTER 10: SUBROGATION

10.1. Unless otherwise provided by the Contract, within the limits of insurance compensation the right of claim against the persons responsible for the damages from the insurance accident transfers from the Insured (Beneficiary) to the Insurer.
The Insured (Beneficiary) is obliged to provide the Insurer with all the necessary evidence and documents, to provide in writing all the information known to them for the latter to exercise their rights transferred to them by the Insured (Beneficiary).

տեղեկատվությունը և իրականացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր գործողությունները իրեն փոխանցված իրավունքների իրացման համար, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

10.2. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է այդպիսի իրավունքից կամ այդ իրավունքի իրացումը դարձել է անհնար նրա մեղքով, ապա Ապահովագրողը ազատվում է վերոնշյալ գործողությունների հետևանքով պատճառված վնասի չափով ապահովագրական հատուցման վճարման պարտականությունից, իսկ եթե ապահովագրական հատուցումը արդեն փոխանցվել է, Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել հատուցված գումարը:

10.3. Եթե Ապահովադիրը երրորդ անձանցից հատուցում է ստացել, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անմիջապես տեղեկացնել այդպիսի գումարների ստացման մասին:

10.4. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրան համապատասխան մասը), եթե պարզվի հանգամանք, որը օրենքով կամ սույն կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում է Ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

10.2. If the Insured (Beneficiary) waived their right to claim against the person liable for the caused damage or the exercise of that right became impossible by the Insurer at the fault of the Insured (Beneficiary), the Insurer shall be exempted from the payment of insurance compensation in full or partially and gains a right to demand a refund for the paid compensation.

10.3. If the Insured has received compensation from third parties, the Insurer pays to the Insured only the difference between the amount payable under the terms of the Contract and the amount, received by the Insured from said third parties. The Insured is obliged to immediately notify The Insurer on the receipt of such amounts.

10.4. The Insured is obliged to return to the Insurer the paid insurance compensation (or its corresponding part), if within the statutory limitation period, a circumstance is discovered that fully or partially deprives the Insured of the right to receive insurance compensation.

ԳԼՈՒԽ 11: ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրողը իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ,

CHAPTER 11: DISPUTE RESOLUTION PROCEDURE

11.1. The Insurer has the right to claim the return of the paid compensation if, after the

եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու՝ սույն Կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

11.2. Սույն Կանոնների համաձայն կնքված Պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

reimbursement, grounds for the denial of the compensation are found out under the Rules and/or the legislation of the Republic of Armenia.

11.2. Disputes between the Parties within the framework of the Contract concluded under the Rules, are resolved through negotiations. In case of a disagreement, the disputes are settled in accordance with the procedures established by the RA legislation.

ԳԼՈՒԽ 12: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

12.1.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,

12.1.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

12.1.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով:

12.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետներում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողը

CHAPTER 12: OTHER PROVISIONS

12.1. According to the Rules, all notifications and letters sent by the Insurer to the Insured (Beneficiary) are deemed duly notified if one of the following conditions have been met:

12.1.1. The notification was sent by mail to the address specified in the Contract or application form,

12.1.2. The notification was sent by SMS to the phone number specified in the Contract or in another document (application form, announcement, etc.) provided by the Insured (Beneficiary) and/or their authorized person,

12.1.3. The notification was sent by email to the email address listed in the Contract or application form.

12.2. If the addresses and/or the above-mentioned details are changed, the Insured (Beneficiary) is obliged to inform the Insurer within a reasonable time. If the Insurer is not informed within a reasonable time about the change of addresses

ողջամիտ ժամկետներում չի տեղեկացվել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումներըգրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում:

and/or other details, all notifications/letters sent to the Insured (Beneficiary) at the old addresses/requisites are duly notified from the date on which such notices were received.

12.3. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն Կանոններում:

12.3. The Insurer has the right to make changes and/or additions to the Rules unilaterally without the consent of the Insured.

12.4. Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Ապահովադրին:

12.4. If a unilateral amendment and/or addition is made to the Rules, the Insurer must notify the Insured in written form regarding those changes no later than 15 days in advance.

12.5. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության Պայմանագիրը:

12.5. In case of disagreement with the amendments and/or additions, the Insured has the right to immediately terminate the Contract.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Սույն լրացուցիչ պայմաններում շարադրված ապահովագրության պայմանները (Վերապահումները) կիրառվում են, եթե ապահովագրության պայմանագրում առկա է դրանց կիրառման մասին ուղղակի նշում կամ դրանք ներառված են Պայմանագրի տեքստում:

Սույն Լրացուցիչ պայմաններում շարադրված դրույթները լրացնում են շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության կանոնների դրույթները:

Վերապահում 003՝ «Հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրություն (այցեր)»

Սույնով համաձայնեցված և հասկացվում է, որ Կանոնների, Ապահովագրության պայմանագրի

APPENDIX 1

The insurance clauses (Reservations) set forth in these Additional Terms apply if there is a direct indication of their application in the Contract or if they are included in the text of the Contract.

These provisions supplement the clauses of the Construction Risks Insurance Rules.

Reservation 003: Post-commissioning warranty liabilities insurance (visits)

The Parties agree that the physical destruction or damage of insured construction and installation

կամ դրա հետ կապված վերապահումների մեջ նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետների պահպանման դեպքում, Ապահովագրության պայմանագրով լրացուցիչ ենթակա են հատուցման ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ոչնչացումը կամ վնասվածքը, որը պատճառվել է ապահովագրված անձի (անձանց) կապալառուի (կապալառուների) հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ներքոնշյալ ժամանակահատվածում, կապալի պայմանագրով նախատեսված իր հետգործարկային երաշխիքային պարտավորությունների կատարման ընթացքում:

Վերապահում 004՝ «Հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ընդլայնված ապահովագրություն»

Սույնով համաձայնեցված է և հասկացվում է, որ Կանոնների, Ապահովագրության պայմանագրի կամ դրա հետ կապված վերապահումների մեջ նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետների պահպանման դեպքում Ապահովագրության պայմանագրով լրացուցիչ ենթակա են հատուցման Ապահովագրության պայմանագրով ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ոչնչացումը կամ վնասը, Պատվիրատուի և Կապալառուի կողմից շինարարության ավարտված օբյեկտի «Ավարտական ակտի» ստորագրումից հետո, որը տեղի է ունեցել Կապալառուի հետգործարկային երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ներքոնշյալ ժամանակահատվածում այն պայմանով, որ՝ դրանք* պատճառվել են ապահովագրված կապալառուի (ների) կողմից հետգործարկային երաշխիքային աշխատանքների կատարման ընթացքում՝ Կապալի պայմանագրով նախատեսված հետգործարկային երաշխիքային պարտավորությունների շրջանակներում:

* այդ ոչնչացման կամ վնասի պատճառն առաջացել է շինհրապարակում շինմոնտաժային աշխատանքների իրականացման

works occurred during the insurance term of the Insured persons' contractor(s)' post-commissioning warranty liabilities of the works of the construction contract will be compensated under the Contract given the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

Reservation 004: Extended post-commissioning warranty liabilities insurance (visits)

The Parties agree that the physical destruction or damage* of insured construction and installation works that were discovered after the signing of completion of acceptance act by the customer and contractor, but occurred during the insurance term of the Insured persons' contractor(s)' post-commissioning warranty liabilities of the works of the construction contract will be compensated under the Contract given the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

* The cause of that destruction or damage occurred during the insurance period of construction and installation works on the construction site due to the defects made by the contractor during the insured construction and installation works, before the signing of the completion of acceptance act of the completed object by the customer and contractor.

ապահովագրված ժամանակահատվածում՝ ապահովագրված շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ Կապալառուի կողմից թույլ տրված թերությունների պատճառով, նախքան շինարարության ավարտված օբյեկտի «Ավարտական ակտի» ստորագրումը Պատվիրատուի և Կապալառուի կողմից:

Վերապահում 006՝ "Արտաժամյա, գիշերային ժամերին և պաշտոնական տոներին աշխատանքների վարձատրման, ինչպես նաև բեռի շտապ առաքման վճարման արդյունքում առաջացած հավելյալ ծախսերի ծածկույթ"

Սույնով համաձայնեցված է և հասկացվում է, որ Կանոնների, Ապահովագրության պայմանագրում կամ դրա վերաբերյալ վերապահումներով նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետների պահպանման դեպքում ենթակա են հատուցման արտաժամյա, գիշերային ժամերին, պաշտոնական տոներին աշխատանքների վարձատրման և բեռի շտապ առաքման (բացառությամբ օդային տրանսպորտով բեռների առաքման) լրացուցիչ ծախսերը:

Սույն դրույթը, սակայն, գործում է միայն այն պայմանով, որ այդ լրացուցիչ ծախսերը կատարվել են ապահովագրված օբյեկտների ֆիզիկական ոչնչացման կամ վնասման հետ կապված, որը ենթակա է հատուցման Ապահովագրության պայմանագրով:

Եթե վնասված օբյեկտների ապահովագրական գումարները պակաս են դրանց ապահովագրական արժեքներից, ապա սույն Վերապահման համաձայն վճարվող ապահովագրական հատուցումը նվազեցվում է նույն համամասնությամբ:

Վերապահում 008՝ "Սեյսմավտանգ գոտիներում գտնվող կառույցներին վերաբերող պահանջներ"

Սույնով համաձայնեցված է և հասկացվում է, որ Կանոնների, ապահովագրության պայմանագրում կամ դրա վերաբերյալ վերապահումներով նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետների պահպանմամբ Ապահովագրողը պատասխանատվություն է կրում երկրաշարժի հետևանքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն

Reservation 006: Coverage of additional costs incurred as a result of payment for overtime, night work, as well as payment for urgent cargo delivery

The Parties agree that the additional costs incurred as a result of payment for overtime, night work, as well as payment for urgent cargo delivery (except cargo delivery by air transport) will be compensated under the Contract given the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

This provision applies only on the condition that these additional costs are incurred in connection with the physical destruction or damage to the insurance objects, which is subject to compensation under the Contract.

If the sum insured of the damaged objects is less than their insurance value, the insurance compensation paid in accordance with this Reservation shall be reduced by the same proportion.

Reservation 008: Requirements for structures in seismic zones

The Parties agree that the Insurer shall be liable for the direct or indirect damage caused by the earthquake only if the Insured proves that the earthquake risk was taken into consideration based on the seismic resistance classes of the buildings on site, and the quality of the materials and works performed, as well as the dimensions on which the

առաջացած վնասների համար ապահովագրական հատուցում տրամադրելու համար միայն այն դեպքում, եթե Ապահովադիրն ապացուցի, որ երկրաշարժի ռիսկը հաշվի է առնվել՝ տվյալ շինհրապարակի համար գործող շենքերի սեյսմակայունության դասերից ելնելով, և որ նյութերի և աշխատանքների կատարման որակը, ինչպես նաև այն չափերը, որոնց հիման վրա հաշվարկներ են կատարվել, համապատասխան կերպով պահպանվել են:

calculations were made, were properly maintained, given that the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

Վերապահում 108՝ "Շինարարական տեխնիկայի, մեքենաների և սարքավորումների վերաբերյալ պահանջներ"

Սույնով համաձայնեցված է և հասկացվում է, որ Կանոններում, Ապահովագրության պայմանագրում կամ դրա վերաբերյալ վերապահումներում նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետների պահպանմամբ Ապահովագրողն Ապահովադրին կտրամադրի ապահովագրական հատուցում այն վնասի կամ պատասխանատվության համար, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է շինարարական տեխնիկային, սարքավորումներին և մեքենաներին ջրհեղեղով և հեղեղումով միայն այն դեպքում, եթե աշխատանքների ավարտից հետո կամ աշխատանքների իրականացման ցանկացած ընդմիջման ժամանակ այդպիսի շինարարական տեխնիկան, այդպիսի սարքավորումներն պահպանվում են այնպիսի վայրում, որն անհասանելի է ավելի հաճախ, քան 20 տարին մեկ անգամ կրկնության վիճակագրական հավանականություն ունեցող ջրհեղեղների համար:

Reservation 108: Requirements for construction machinery and equipment

The Parties agree that the Insurer will compensate the Insured for the damage or liability that was directly or indirectly caused to the construction machinery, equipment and vehicles by flood only if after the works or during any breaks from works this construction machinery and equipment is stored in a place that is inaccessible for floods with a statistical probability of recurrence more than once every 20 years given that the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

Վերապահում 114՝ "Սերիական վնասներ"

Սույնով համաձայնեցված է և հասկացվում է, որ Կանոնների, Ապահովագրության պայմանագրի կամ դրա վերաբերյալ վերապահումների մեջ նշված դրույթների, պայմանների, բացառությունների և ժամկետները պահպանելով՝ նախագծում սխալների հետևանքով (համապատասխան վերապահումով ապահովագրական ծածկույթի ընդլայնման դեպքում), թերի նյութերի օգտագործման և (կամ) նույն պատճառով շինությունների, շինությունների

Reservation 114: Serial damages

The Parties agree that the damage due to errors in design (in case of expansion of insurance coverage with appropriate reservation), the use of defective materials and (or) the use of buildings, parts of buildings, machinery or equipment that undergone substandard repairment is subject to compensation after subtracting the deductible amount according to the scale below given that the clauses, provisions, exceptions and terms specified in the Rules, the Contract or related reservations are kept.

մասերի, մեքենաների կամ նույն տիպի սարքավորումների համար աշխատանքների անորակ կատարման արդյունքում պատճառված վնասը ֆրանշիզայի մասհանումից հետո ենթակա է հատուցման՝ ստորև բերված սանդղակին համապատասխան՝ Ապահովագրության պայմանագրում սահմանված յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում՝	For each insurance accident defined in the Contract:
- 100%՝ առաջին երկու ապահովագրական պատահարների դեպքում;	- 100% for the first two insurance accidents;
- 80%՝ երրորդ ապահովագրական պատահարի դեպքում;	- 80% for the third insurance accident;
- 60%՝ չորրորդ ապահովագրական պատահարի դեպքում;	- 60% for the fourth insurance accident;
- 50%՝ հինգերորդ ապահովագրական պատահարի դեպքում:	- 50% for the fifth insurance accident.
Հետագայում նման վնասը ենթակա չէ հատուցման:	Such damage is not subject to compensation in the future.